

Կ. Վարդապետի

Բարձր

1928/0

8855

Վ. ԱՆՆԱԳԻՆՆ

Բ Ա Լ Ի Կ Ը



ԿՆՆՈՅ ԵՐԵՎԱՆ

ՏՊ. «Հրագրան»
Պեյրուք
1928

891.99

4-15

ՀԱՆՐԱՊԵՏԱՆ

413

Բ Ա Լ Ի Կ Ը

ՊԱՏՄԻՆԵՐ

18855

ՅԳ. Հրագրան

Պեյուր

1928

Բ Ա Լ Ի Կ Ը

I

Մայրիկան Լիզիկը, Յովնանեան դպրոցի վերջին դասարանի աշակերտուհի, սիրում էր Բագրատ Աղայեանին, որ նոյնպէս աշակերտ էր՝ Ներսիսեան դպրոցի աւարտական դասարանի:

Դպրոցում բոլոր ընկերուհիները գիտէին այդ սիրոյ մասին: Սակայն ոչ ոք չէր կատակում Լիզիկի հետ կամ նեղացնում չարածճիօրէն, որովհետեւ ամէնքոն էլ սիրում էին նրան, Լիզիկին:

Սիրուելու էլ աղջիկ էր — ընկերական, շուտ մտերմացող, բարեսիրտ զիջող:

Վճիտ աչքեր ունէր՝ աղեղնաւուն սեւ յօնքերի հովանու տակ: Անսպառ ու միշտ թարմ ժպիտ էր հօսում այդ աչքերից: Ժպիտը՝ զուարթութիւն, որ գալիս էր խորունկ հոգու հեռաւոր ակունքներից:

Ընկերուհիները կոչում էին նրան՝ Բալիկ: Բագրատն էր այդ անունը տուել առաջին անգամ: Իրաւ և Լիզիկի անունների սկզբնական վանկերն էին իրար միացուած՝ «Բա-լի», որը և քնքշացել, դարձել էր՝ Բալիկ: Բագրատի կազմած այս նոր անունը շատ դուր եկաւ Լիզիկին:

... — Ես քո բալիկն եմ չէ՞ Բագրատ:

— Այո, Բալիկ ջան, դու իմ անուշ բալիկն ես:

Ոսոք էին տուել իրար. — «Կաւարտենք դպրոցը, մի քանի տարի կը սովորենք համալսարանում ... յետոյ կամուսնանանք... ձեռք ձեռքի՝ միասին կը պայքարենք կեանքի մէջ... եւ երջանիկ կը լինենք»:



Ապրում էին Բազրասն ու Լիզիկը միեւնոյն փողոցում, որ նեղ էր ու փոքր, — քաղաքի մի անաղձուկ թաղում: Տեսնում էին շարունակ, ամէն օր: Երեկոները՝ միշտ միասին: Անձրեւներն ու ձմեռուայ ցրտերն էլ չէին խանգարում . . . միայն թէ՛ հանդիպեն իրար՝ ամէն իրիկուն . . .

— Ինչ վատ բան է, Բազրաս, մեր դպրոցը՝ այս կողմն է, ձերը՝ այն կողմը: Առաւօտները միասին կ'երթաինքս Ամէն առաւօտ միասին . . .

— Հա, Բալիկ ջան, ափսոս: Գոնէ կրկուսի տեղ մի հատ դպրոց լինէր՝ միեւնոյն տեղում, երկսեռ, ինչպէս օրինակ լինում է ուրիշ երկրներում:

— Ինչ լաւ կը լինէր, չէ՛, Բազրաս . . . ախ ինչու այդպէս չի Ամբոյջը օրը միասին Ամէն ժամ, ամէն բողէ երբեք, երբեք չի բաժնուենք իրարից . չէ՛, Բազրաս:

- Չենք բաժնուի: Ո՞վ է կարող բաժանի:
- Ոչ ոք:
- Ի հարկ է, ո՞չ ոք: Դու իմն ես . . .
- Դու էլ իմը, սեւ տղայ ջան, յաւիտեան, յաւիտեան:

... Եկաւ Յեղափոխութիւնը՝ 1917-ի Փետրուար ամսին:

Փոթորիկի ազատութեան յաղթ կոհակները, որ ողողեցին հասարակական կեանքը ողջ, — մտան նաեւ դպրոցական պատերից ներս: Կազմուեցին աշակերտական միութիւններ՝ ինքազարգացման նպատակներով եւ հասարակական-յեղափոխական ձգտումներով ու նշանաբաններով:

Ժողով, դաստիարակութիւն, վիճաբանութիւններ: Յեղափոխութիւն, սոցիալիզմ, աշխատանքի դասակարգ պրոլետարիատ, բուրժուազիա, Դաշնակցութիւն, Սո-

ցիալ - դեմոկրատիա, բուլշեւիզմ, մէնչեւիզմ: Պատերազմ շովինիզմ, ազգ, հայրենիք, ինտերնացիոնալ . . .

Հասարակութեան կեանքը, միաքր, հանդիստը, ժամանակը յուզող ու այրող բոյսը բառերը, նշանաբանները, հոսանքները՝ իրար խառնուեցին աշակերտների պատանեկան եւանդի ու ոգեւորութեան մէջ: Եւ քաղաքի բոյսը դպրոցականների շրջանում յայտնի դարձաւ ու հաշակուեց — Բազրասը:

Տեղովը՝ ետանդ: Միաքր՝ սուր: Միշտ պատրաստ՝ վիճելու, խօսելու, քարոզելու: Պայքարի սիրահար: Ունէր հետադարձական բնատուր ձիրք: Յամառ էր ու աշխատասէր: Երիտակ ու անձնուէր:

... — Տղայ ջան, ախր այդեւս ամէն իրիկուն չենք լինում միասին:

— Վնաս չունի, Բալիկ ջան . . . Ես եմ զբաղուած: Այս իրիկուն էլ պիտի գնամ կոմիտէի ժողովին. զեկուցում եմ տարւում եմ աշակերտական Ֆրակցիայի մասին:

- Ինչ կ'օրհտէ, տղայ ջան:
- Մերը: Հայ Յեղափոխական Դաշնակցութեան քաղաքային կոմիտէն:
- Ի աշնակցական ես:
- Ի հարկէ:

... Օրեր անցան եւ դարձեալ՝ — Տղայ ջան, — ասաց Լիզիկը, — դու բոլորովին մոռանում ես Բալիկիդ: Երէկ ամբողջ օր ու գիշեր չտեսայ քեզ, էլի՞ ժողով:

— Հա, Բալիկ ջան: Դաշնակցութեան սայօնական ժողովն է. ես էլ մանակցում եմ: Պատգամաւոր՝ մեր Միութեան կուսակցական Ֆրակցիայի կողմից: Դեռ չորս-հինգ օր կը տեւի սայօնականը: Օրական երկու նիստ ունենք. առաւօտները՝ մինչեւ ժամը 2-ը,

3-ը, եւ ճաշերից յետոյ՝ մինչեւ երեկոյեան 9-ը, 10-ը :
Երէկ գիշերուայ ժամի 12-ն էր, երբ գրուեցինք :

— Գէշ տղայ, ինձ մենակ ետ թողնում... ա՛յ կը-
խառվեմ քեզանից :

Կուսակցութիւններ, քաղաքական խնդիրներ, բուրժ-
ուազիա, պրոլետարիատ, ազգ, դասակարգ... — չէին
հետաքրքրում Լիզիկին : Ընկերուհիները, որ գրեթէ
բոլորն էլ ասրուել էին յեղափոխական ու կուսակցա-
կան նշանաբաններով, քանի՛-քանի անգամ հրաւիրե-
ցին, զրդեցին —

— Մկ, Բալիկ, ինչո՞ւ քեզ հետու ես պահում :

Մենք չպիտի անմասն լինենք Մեծ Յեղափոխութեան
հանդէպ : Մենք, որպէս նոր սերունդ, պարտաւոր ենք
մեր սրտին մօտ ընդունել հասարակական գաղափար-
ները : Հետաքրքրուի՛ր, ոգեւորուի՛ր :

Մի անգամ էլ, ընկերուհիներից մէկը, Հեղուչը...
Ամօթ է, վերջապէս, — ասաց Լիզիկին. — դա՛ յետամը-
նացութիւն է : Դրանով ցոյց ես տալիս միայն քո
պահպանողական ձգտումներդ :

Սակայն Լիզիկը չհամոզուեց սչինչով : Անմասն
ու անտարբեր կեցու յեղափոխական եռուղեռի հան-
դէպ : Հակում չկար, սէր չկար...

Մանաւանդ որ Բագրատն ինքը երբեք չփորձեց
կուսակցական դարձնել իր Բալիկին : Հասարակական
գործունէութիւնը իրան էր վերապահել...

— Որովհետեւ, — բացատրեց նա մի օր Լիզիկին,
երբ սա դանդատում էր կրկին (ա էլի՛ ժողով, ինձ էլի՛
մենակ...) — որովհետեւ ես սիրում եմ իմ ժողովուրդը .
եւ չեմ կարող կուսակցական չլինել :

Մի իրիկուն (ժողով չկար եւ երկուսն էլ քով-քով-
ով նստած էին քաղաքի բուսաբանական պարտիզումը
մէկըն) — Լիզիկը՝

— Շա՛տ ես սիրում կուսակցական գործերդ : Ինձա-
նի՛ց աւելի ես սիրում :

— Բալիկ ջան, — պատասխանեց Բագրատը, — կու-
սակցական գործերս իմ Հայրենիքի, իմ ժողովուրդի
համար են :

— Ժողովուրդդ, Հայրենիքդ... շա՛տ ես սիրում :

— Ի հարկէ :

— Ինձանի՛ց աւելի :

— Աւելի :

— Նշանակում է դու ինձ չե՛ս սիրում, գէշ
տղայ... գէշ :

— Սիրում եմ, Բալիկ ջան, քեզ շատ եմ սիրում :
Գու՛ իմ անուշ Բալիկն ես. բայց դու՛ ջոկ, Հայրենի-
քը՛ ջոկ :

Բաղաքի ընդհանուր Աշակերտական Միութեան
մէջ մէկ ուրիշ պատանի եւս անուն ու հուշակ հա-
նեց Բագրատին հաւասար —

Արգարեան Գրիշան :

Բագրատին հասակակից եւ նրա պէս եռանդով
հարուստ, ճարտար, լեզուանի, կծան, նրա պէս յա-
մառ, գործունեայ, բայց — նրա կուսակցական հա-
կառակորդը :

Բոլշեւիկ :

Աշակերտական Միութեան վարչութեան մէջ —
Բագրատը՝ նախագահ, Գրիշան՝ քարտուղար :

... ժողովներ, վիճարանութիւն ու տարածայ-
նութիւններ — եւ նրանք երկուսը դարձան կուսակ-
ցական ախոյեաններ՝ անհաշտ ու կրքոտ, որովհետեւ
երկուսն էլ հաւասարապէս՝ յամառ ու անձնուէր :

Եւ այս Արգարեան Գրիշան էլ հաւանեց Լիզի-
կին :

Աղջիկը առաջ էլ զուր էր գալիս նրան, բայց չէր
գրաւել ուշքը: Յետոյ միայն, յեղափոխութեան թո՛ն
ու բո՛նի մէջ, հասարակական խնդիրներով տարուած,
ողեւորուած միջոցին, երբ սակաւ էր հանդիպում
աղջկան, — Գրիշան աւելի ու աւելի յաճախ էր մտա-
բերում նրան... ու սկսեց կարօտել նրա աչքերին:

Դրդեց Լիզիկի ընկերուհիներից նրանց, որ իրան
համակիր էին կուսակցորէն.

— Առաջ քաշէք այդ աղջկան, մեր շրջանը մտցը-
րէք: Հարկաւոր է ուշադրութիւն դարձնել. ապագա
յում անպայման լաւ ոյժ կը լինի մեզ համար:

Եւ Հեղուշը, ընկերուհին, որ այժմ դարձել էր
բոլշեւիկ, նորէն խօսեց հետը.

— Լիզիկ ջան, չե՛ս ուզում՝ մեր շրջանը մտիր:
Աւարտողների առանձին շրջան ենք կազմել՝ կոմու-
նիստական կուսակցութեան դրօշի տակ: Նախագահն
ես եմ: Իսկ ընկեր Գրիշան դառախօտում է մեզ հա-
մար: Ծարաթն երկու անգամ, ամէն երկուշաբթի ու
հինգշաբթի: Կըգաս:

— Չէ, Հեղուշ ջան:

— Ի՛նչ է հարկէ, հասկանալի է պատճառը. —
հեգնեց Հեղուշը: — Չես մտնի մեր շրջանը, քա-
նի որ ետդ դաշնակցական է:

Ապա եւ աւելացրեց. «Բայց եթէ դու դատես օր-
յեկտիւ կերպով, կը տեսնես՝ որ կոմունիստական
կուսակցութիւնը աւելի բարձր է: Եւ ընկեր Գրիշան
աւելի պատրաստուած ոյժ է, քան քո Բազրատ Աղա-
եանը:

Լիզիկի աչքերը ժպտացին... («Գրիշան աւե-
լի»... բայց ո՞վ կը հասնի իմ սեւ տղին):

— Չէ, Հեղուշիկ... Ես ժամանակ չունիմ:

Արգարեան Գրիշայի փորձ ու ջանքերը զուր էին

անցնում: Լիզիկն անտարբեր էր մնում դէպի նա:
Չէր իսկ մտածում նրա մասին՝ երբեւիցէ. թէկու՞ղ
պատահարաբ...
Միայն մի անգամ հաւանել էր նրա ճակատը.

— Ի՛նչ լաւ ճակատ ունի Արգարեան Գրիշը,
լայն ու փայլուն, կարձեռ ողորկ:

Ու այս խօսքերը Բազրատին ասաւ, երբ հետը
նստած պարտիզում, ունկնդրում էր նրա պատմու-
թիւններին՝ քաղաքում կատարուող դէպքերի եւ կու-
սակցական գործերի ու պայքարի մասին: Այդ պատ-
մութիւնների ընթացքում Արգարեանի անունն էլ
մէջտեղ եկաւ եւ Լիզիկն իր տպաւորութիւնը յայտ-
նեց՝ նրա ճակատի մասին...

— Ուրե՛մն, — կատակով, զուարթ, հարցրեց Բազ-
րատը, — Գրիշի ճակատը իմի՛նից աւելի լա՛ւն էս հաւ-
մարում:

— Այո՛, ի հարկէ, պատասխանեց Լիզիկը. (ու
վճիտ աչքերը խաղաղ ու ժպտուն մտիկ էին տալիս
սեւ տղայի աչքերին). նրանը աւելի սիրուն է, Բայց
ես՝ քեզ եմ սիրում, այ տղայ ջան: Ո՛չ մի ուրիշ տղայ
քեզ չի հաւասարուի ինձ համար: Ի հարկէ ոչ ոք.
... Եւ Գրիշան չէր հաւասարում Բազրատին:

Լիզիկը նրա հետ փօլօվինեան պողոտայով անցնել իսկ
չէր ուզում (քաղաքի նախընտրուած զրօսավայրը):

«Ո՛ւհ, չեմ սիրում ես դրան»: Բայց եւ չէր
ատում. այլ անտարբեր էր ու անզգայ՝ Արգարեանի
յամառ հայեացքների եւ յարատեւ հետապնդումների
հանդէպ: Միեւնոյն ժամանակ խուսափումներ ունէր,
մի տեսակ՝ վախենում էր նրանից:

Մի իրիկուն, թատրոնից դուրս գալիս, երբ Լի-
զիկը մենակ էր... (Բազրատն այդ օրերին քաղաքում

չէր՝ իրանց Միութեան կողմից գնացել էր Բաթում՝
այնտեղի աշակերտութիւնը կազմակերպելու համար)

— Գրիշան իր թեւն տաջարկեց.
— Ընկեր Լիզիկ, թոյլ տուէք... մութն է:

— Շնորհակալ եմ... ս'չ, — մերժեց Լիզիկը, երկ-
կիւղով բռնուած ու հաստատ, վճռական.

— Ինչո՞ւ ախր, — պնդեց Գրիշան, — թոյլ տը-
ուէք... ձեր յարմարութեան համար: Ես ձեզ կը հաս-
ցընեմ տուն... որ մենակ չգնար: Այս մութ գիշերին
Հաւրարար գնայը մենակ ձեզ համար դժուար կը լինի:

— Ո՛չ... — կրկին հրաժարուեց Լիզիկը, — ես
ինքս կերթամ... ցտեսութիւն:

Աղջկայ անտարբերութիւնից, խուսափումներից
Արգարեանը դժգոհել սկսեց... հե ապա դժգոհութիւ-
նը փոխուեց խանդի:

Այնուհետեւ, Աշակերտական Միութեան ժողով-
ներին, վարչական մարմնի նիստերին, դասախօսու-
թիւններին եւ այլ հանդիպումներին Գրիշան դար-
ձաւ աւելի կրքոտ. աւելի անհաշտ՝ Աղայեան Բագրա-
տի վերաբերմամբ: Օրէցօր աւելի եռանդ ու թափ
ցուցադրելով, կատաղաբար ու անխնայ, որպէս Մարք-
սիզմի ու կոմունիզմի հետեւորդ՝ ձաղկում էր Բագ-
րատի նեղ նացիօնալիստական իդէոլոգիան: Վճռեց
ջախջախել, ոչնչացնել նրան... «Թո՛ղ այդ աղջիկն
իմանայ ու տեսնի իրա սեփական աչքերով, որ ուժե-
ղը ես եմ, արժանաւորը ես եմ»:

II

Դպրոցը աւարտեցին՝ երեքն էլ միաժամանակ
— Լիզիկը, Բագրատը, Գրիշան: Գարունն արդէն

վերջանում՝ ամառն էր սկսում:

Համայնարան գնալու խնդիրը թողնուեց առժա-
մանակ, որովհետեւ փող չկար: Ոչ Լիզիկի ծնողներն
ուշեւար էին, ոչ էլ Բագրատի մայրը, որ վաղուց էր
այրի, կարող էր օգնութեան հասնիլ...

— Վնաս չունի, Բայիկ ջան, մեր համայնարանը
մի քիչ էլ թող ուշանայ, ինչ կայ որ:

— Հա՛, տղայ ջան, կը սպասենք: Ես էլ որեւէ
աչխատանք կը ձարեմ, փող կը վստասկեմ: Դո՛ւ էլ,
չէ՞, Բագրատ:

— Ի հարկ է մուսուլմանութիւն կ'անեմ մի տարի:
Սուբբ վարդանի դպրոցում տեղ կայ, հոգաբարձու-
ներն էլ մերոնցից են:

Մէկ շարաթ չանցած, Լիզիկը ծառայութեան մը-
տաւ քաղաքային վարչութեան մէջ՝ որպէս մեքենա-
գրուհի: Իսկ Բագրատը որոշեց ճանապարհուել Երեւան,
իր հայրենի քաղաքը՝ ամուսնացած երկու քոյրերին տե-
սութեան: «Հա՛մ էլ, ասաւ, մի քանի դասախօսու-
թիւն կը կարգամ»: Ս. Վարդանի դպրոցի Հողաբար-
ձութիւնը կանխապէս վարձեց նրան՝ առաջիկայ տար-
ուայ համար որպէս ուսուցիչ...

Բագրատը ճանապարհուեց հե — հաղիւ երեք օր
յետոյ...

... «Իմ սեւ տղայնամակ գրեց նրան Լիզիկը, —
քանի օր է չկաս, ինձ մենակ ես թողել: Չեմ կարողա-
նում նկարիդ նայել — իսկոյն սկսում եմ լալ: Այն
րոպէին, երբ բաժնուեցինք իրարից կայարանում,
եւ դեռ չէի իմանում, թէ այսչափ զօրեղ կարօտ դո-
յութիւն ունի աշխարհիս երեսին... Յետոյ զգացի,
երբ վերադարձայ տուն: Տղայ ջան, տղայ ջան, շո՛ւտ
շո՛ւտ, չեմ կարողանայ դիմանալ երկար, առանց քեզ»:

Եւ Բագրատը շուտ վերադարձաւ Երեւանից :
 Գնալիս ասել էր . «Կը մնամ անուազն երկու շաբաթ :
 Առատ թնթ ու ծիրան կուտեմ » : Բայց մէկ շաբաթ
 իսկ չմնաց այնտեղ : Շտուպեց Թիֆլիզ յետ գայ : Լիզի-
 կի նամակն ազգեց : Ինքն էլ ի հարկէ կարօտեց իր
 աղջկան . . . Կսր, սակայն, նաեւ մի այլ անհանգըս-
 տութիւն — երկիւղ, որ վերջին ժամանակ սկսել էր
 ծխալ նրա հոգու մէջ եւ որ Երեւանում . . . անջատման
 կարճ օրերին, սաստկացել՝ նեղիչ էր դարձել . . . Աբ-
 զարեան Գրիշան :

Բագրատը գիտէր, որ սա հետամուտ է Լիզիկին :
 Մի անգամ էլ լսել էր թէ Գրիշան իր մասին արտա-
 յայտուել է . «Իրա ինչին է սիրահարուել էզ աղջիկը . . .
 ախտս աղջիկ» :

Մերթ-միթք միտքն էր գալիս նրա ճակատը՝ Լիզի-
 կի ասած խօսքերն էլ հետը միասին — . . . «Դայն ու
 փայլուն, կարծես սղորկ» :

Ու սկսել էր հետզհետէ չսիրել Արզարեանին : Տե-
 սական հակառակութիւնը նրա բոլշեւիկեան սկզբ-
 բունքների հանդէպ՝ խտացաւ, սաստկութիւն առաւ
 անձնական կասկածներից տհաճութիւնն ից . հակա-
 կրանքից . . . Անջատման օրերին խանդը բորբոքուեց
 անտունելիօրէն :

Եւ Երեւանից վերադարձին Բագրատը հոգեկան
 խռովք բերեց իր հետ . . .

— Յաճախ էիք տեսնուում, Բալիկ . . . դու եւ
 Արզարեան Գրիշը :

— «Յաճախ» — զարմացած մտիկ տուին Լիզիկի
 վճիռ աչքերը :

— Տեսնուում էիք . . .

— Միայն մի անգամ թատրոնից դուրս գալիս . . .

Ինչ կարիք որ աւելի տեսնուէինք :

«Բայց ինչպէ՞ս է եղել, մտածեց Բագրատը, որ
 Գրիշն ինքը կարիք չի զգացել հետը յաճախ տեսնուե-
 լուս Կարող էր չէ՞, հանդամանքից օգտուել . . . »

— Ինչի՞ մասին ես մտածում, աղայ ջան, հարցրեց

Լիզիկը՝

— Ոչինչ . . . այսինքն . . . Հա՛, Բալիկ, մենք

երբ ամուսնանք :

— Երբ ինքդ կամենաս, սիրելիս :

Որոշել էին . . . «Առայժմ մասնք իրրեւ նշան-
 ուածներս եւ եթէ Աստուած յաջողի, գալ տարի կարո-
 զանանք անցնել Եւրոպա, էնտեղ էլ հէնց կամուս-
 նանանք» : Բագրատն էր այս բանաձեւը տուել և Լի-
 շիկը համաձայնել էր լիովին :

. . . Իսկ հիմա՝ «Ե՛րբ ամուսնանանք» : Բագրա-
 տը պարզ գիտակցել էր միշտ և զգուճ էր, որ պէտք

էր պարզ ամուսնանալու, ախր շատ էր ջանք : Մա-
 չկար վաղ ամուսնանալու և վախենալ Գրիշայից : Ո՛վ
 կայն սկսել էր կասկածել ու վախենալ Գրիշայից : Ո՛վ
 գիտէ, Լիզիկը յանկարծ ենթարկուել նրա ազդեցու-
 թեան . . .

. . . — Երբ ինքդ կամենաս, սիրելիս, — կրկնեց Լի-
 շիկն իր պատասխանը՝ երբ տեսաւ, որ աղան, հարցը
 տալուց յետոյ, մտքերի մէջն ընկաւ և թուաց թէ՛ չու-
 զեց իր պատասխանը ստանալ . . . — Իսկ ինչի՞ մասին
 ես մտածում, աղայ ջան :

— Ոչինչ, Բալիկ ջան . . . մեր ապագայի մասին :

— Մի մտածի, իմ անուշ աղայ, Ամէն ինչ լաւ կը

լինի : Չէ՞ որ ես շատ եմ քեզ սիրում :

. . . — Հապա Արզարեան Գրիշի լէն ու փայլուն
 ճակատը . . . հարցրեց Բագրատը : Կատակ էր հարցը .
 սակայն Բալիկը լուրջ ընդունեց ու նեղացաւ . վճիռ
 աչքերը պղտորուեցին մէկէն . . .

Բայց և շուտով մոռացուեցին կատակն էլ, այդ ամբողջ խոսակցութիւնն էլ և այնուհետեւ Բագրատն այլեւս չհարցրեց՝ թէ ԵՐԲ...

Կասկածները թուլացան, ապա և չքացան բոլորովին, քանի որ Արզարեան Գրիշան այլեւս քաղաքում չէր:

Հեռացել էր, Բագրատի վերադարձի օրերին: Բագրատը հետաքրքրուեց ու իմացաւ, որ նա իր կուսակցութեան հրահանգով գնացել է էրզրումի ռազմաճակատը՝ զինուորների մէջ պրոպագանդ վարելու նպատակով:

Այս տեղեկութիւնը հաճելի չեղաւ Բագրատին, որովհետեւ այն ժամանակ (ամառուայ կէսն էր) բոլշեւիկները գործ էին դնում ամէն աշխատանք ու ջանք՝ որպէսզի ռուսական զորքն իրենց կողմը քաշեն: Բայեւ լու համար՝ պէտք էր քայքայել, և բոլշեւիկեան ազիտատորներն ու գործակալները սկսել էին եռանդով, անխնայ զարկել, քանդել, կործանել...

Բագրատը լաւ էր հասկանում, որ ըստակի այդ քայքայումը կը նշանակէր՝ Հայրենիքը վտանգել, ուստի, զէջ ազդուեց՝ Գրիշայի կուսակցական առաքելութեան լուրն առնելով:

Բայց և միաժամանակ, գաղտուկ ու լռելայն, իր հոգու խորքում, գոհունակութիւն զգաց, որ Գրիշան հեռացել էր քաղաքից...

Անցան շարաթներ, ամիսներ: Աշունը սկսուեց:

III

Օրերը վատացան: Անձրեւի, թուխպ ու ցրտերի հեռ միատեղ՝ սեւ ամպեր ու արհաւիրքներ քայեցին հայ ժողովուրդի վրայ: Կովկասեան ռուս բանակը, իսպառ քայքայուած, չտապ ու անկարգ, ցրիւ անասնօրէն, տուն էր դառնում՝ դէպի Ռուսաստան:

Երկիւղ, իրարանցում, ազմուկ ու կռիւներ, վըհատութիւն ու վտանգներ, ժողովրդական խռովք ու յուզումներ՝ տիրեցին Հայրենիքում: Փոթորկահար ծովի պէս, մռայլ ու երեր, երկիրն ալեկոծում էր ափից ափ... և փրփրադէզ ալիքների մէջ Գրիշան անյայտացաւ:

Այլեւս չերեւաց թիֆլիզում: Հետքը կորաւ:

«Մեռել է արդեօք» (համաճարակ հիւանդութիւններ կային):

«Սպանուե՞լ է արդեօք» (զինուած ընդհարուեցին էին տեղի ունենում)...

— խորհում էր Բագրատը: Երկար ժամանակ, սչինչ հաստատ չկարողացաւ իմանալ: Ասում էին իրր Արզարեան Գրիշան, տուն դարձող մի զօրամասի հետ միասին, անցել էր Հիւսիսային Կովկաս՝ Ռազմավիրական ճանապարհով: Հեղուշըն էր առաջին անգամ՝ Լիզիկին էր յայտնել այդ տեղեկութիւնը: Յետոյ էլ ուրիշները՝ ուրիշ բաներ ասացին...

Բայց — «ինչեւիցէ... միայն թէ հեռժ...» — մանաւանդ որ այնուհետեւ Գրիշայի մասին այլեւս ո՛չ մի լուր: Մարդը ոտով-գլխով գնաց, կորաւ: Թո՛ղ...

Մասնաւոր մարդկանց վիճակով հետաքրքրուելու ժամանակ էլ չէր, քանի որ արդէն Հայրենիքի գոյութիւնն էր վտանգուել: Թշնամին հրով ու սրով շարժուել էր առաջ և սարսափահար ժողովուրդը փախչում էր զիւղերից, քաղաքներից...

Անձնական խռովքի, երկիւղի ու խանդի համար այլեւս տեղ չկար. և Գրիշային իսպառ մոռացած, Բագրատն իր ուշադրութիւնն ու եռանդը Հայրենիքին էր ուղղել:

Նւ աշխատում էր կատարելու բոլոր հրահանգները, որ Կուսակցութիւնն էր տալիս:

... Պայքարի մէջ, օրհասական վտանգներին ի տես աւելի զօրացաւ ու խորացաւ նրա սէրը՝ դէպի հարազատ երկիրն ու ժողովուրդը: Հասարակական փորձութիւններից աւելի ամբողջան նրա զազափարները, միտքը սրացաւ: Աւելի կազմակերպուեց ու կոփուեց նրա կուսակցական ոգին...

Եւ երբ՝ ահաւոր վտանգներն եկան ու անցան, արհաւիրքի մակընթաց յորձանքները սկսեցին տեղի տալ հետզհետէ, — Հայրենիքը, թէ է շարչարուած ու վերաւոր, սթափուեց ու կենդանացաւ վերստին...

...Նոր կեանքի ու դարնան հետ (աշուեն էլ) ձմեռն էլ անցել էին արդէն) Բազրատի անուէր սկըսեց փթթել ու կանաչել: Աշակերտական Միութիւնից յետոյ, նա հիմա կուսակցական շրջանում և ժողովրդական լայն խաւերի մէջ դարձաւ յայտնի...

«Տաղանդաւոր, անձնուրաց գործիչ» — ասող եղաւ նրա մասին և այդ կարծիքը մնաց, տարածուեց:

Լիզիկն էլ լսում էր սեւ տղի գովքը և հպարտանում: Ուրախութիւնից՝ վճիտ աչքերը փայլում էին աւելի...

Ժամանակն էլ, անշեղ ու հանդարտ անցնում էր, դնում:

Հայրենիքը շարունակում էր խաղաղուել: Բայց անդին, Ռուսաստանում սկսուել էին կռիւներ՝ Կարմիրների ու Սպիտակների միջեւ: Կատաղի, անարիւհեղ կռիւներ՝ օրէցօր աւելի սաստկացող — այնքան, որ չէր երեւում նրանց վերջն ու վախճանը: Եւ ատանձնապէս հրեօսային կովկասը՝ խտովայող ծփում էր այդ կռիւներից: Քաղաքներ, աւաններ, գիւղեր՝ մերթ ոսկրակներով, մերթ կարմիրներով ըն-

քի տակն էին անցնում և արիւնոտուելով ու քանդուելով խլում էին ձեռքից ձեռք:

Գալիս էին այն տեղից լուրեր, մանրամասնութիւններ, որ խճողուած էին լինում զանազան դէպքերի նկարագրութիւններով ու անուէններով զանազան մարդկանց, որոնք հռչակուել էին խոշոր գործերով, ռազմական յաղթութիւններով...

Ու մի օր, բոյշեւիկեան Ռուսաստանի հռչակուած մարդոց անուէնների ժխորի միջից՝ հնչեց ու եկաւ, մինչեւ Բազրատի ականջը հասաւ —

«Ընկեր Գրիչա»: Հրեօսային կովկասում:

Նախ՝ «Կարմիր բանակի N. զօրամասի յատուկ Բաժանմունքի պետ»:

Ապա՝ «Համառուսական Արտակարգ Յանձնաժողովի յատուկ լիազօր»:

Հետզհետէ իմացուեցին այլեւայլ մանրամասնութիւններ. —

— Արգարեան Գրիչայի շնորհիւ խտօրէն ճընչուել է կողակների մի ապստամբութիւն՝ Մօզդօկի շրջանում: Գնդակահարուեցին ապստամբութեան բոլոր պարագլուխները:

— Չափազանց խիտ է ու անխնայ, անզիջում՝ բոլոր հակառակորդների դէմ: Դէպքեր են եղել, որ անձամբ ինքն է գնդակահարել մարդկանց:

— Բոյշեւիկեան կենտրոնը շատ է զնահատուած Արգարեանի ետանդ ու անձնուէրութիւնը: Եւ Մոսկուայում ենթադրում են, որ նա կը լինի ապագայ խորհրդային Հայաստանի Յեղկոմի անդրանիկ նախագահը...

... «Վնաս չունի, մտածում էր Բազրատը... դեռ շատ հեռու են մեզանից: Լեռներից անդին, քաղաքական սահմաններից անդին»:

1400-2001

...Ու խանդաղատան քով մտիկ էր տալիս Բագարատը՝ իր աղջկայ վճիռ աչքերին: Գոհ՝ իր սիրուց: Գոհ՝ իր ծաւալուող անունից...

Պատասխանատու պաշտօն էր ստացել Հայրենիքի կառավարութեան մէջ: Եռանդն անսպառ՝ աւելանում, հա՛ աւելանում էր: Ուշքը — միտքը տարուած կլանուած էր Երկրի վերաշինութեան, վերակենդանացման բուռն հոգսերով...

— Ինչպէս որ ձուկը, Բալիկ ջան, լայնարձակ ալիքների մէջ, այդպէ՛ս անա զգում եմ ինքս ինձ մեր այս աշխատանքների մէջ... լո՛ղ եմ տալիս եւ բնաւ չեմ յոգնում:

...Սակայն, ժամանակն անցաւ ու անցաւ... փուլ եկան բոլոր քաղաքական ու աշխարհագրական սահմանները: Լեռներն այլեւս արգելք ու պատուար չեղան:

Երբորդ տարուայ վերջին, Արդարեան Գրիչան, Հիւսիսից եկած Կարմիր զօրքերի հետ միասին, վերադարձաւ Թիֆլիս՝ յաղթական ու մեծանուն, որպէս՝ Համառուսական Չեկայի Կոլլեգիայի անդամ:

IV

Երկրում հաստատուեցին սովիէթական կարգեր. և դաշնակցական գործիչները մասամբ հեռացան սահմաններից անդին, մասամբ ցրիւ եկան երկրի դանազան տեղերում՝ պահուելով, ծպտուելով: Բուշուէլիկները նրանց՝ ժողովուրդի թշնամիներ յայտարարեցին, և բանտ ու գնդակահարութիւն՝ դաժանօրէն կախուեցին նրանց գլխներին:

Գրիչան ատում էր Դաշնակցութիւնը, որ-ճոճրա-գործների բանդիտային կազմակերպութիւն է եղել՝ իր

«կզբնաւորութեան իսկ օրից»:

Բոլոր կարգի ու տեսակի հակայեղափոխականներին անխնայօրէն հալածելու լիազօրութիւնները գրպանում, և նրաց իսպառ ջնջելու կամքն ու վճռականութիւնը մտքում՝ եկաւ նա ու անյապաղ անցաւ գործի:

Չերբակալութիւններ, բանտարկութիւն, յեղափոխական դատ ու դատաստան... ճեպոյց ո՛ւր է Աղայեան Բագրատը:

- Թաքնուում է, — ասին չէկիստ խուզարկուները:
- Հաստատ այստեղ է:
- Հաստատ: Հէնց էստեղ՝ Թիֆլիզում:
- Հապա ինչո՞ւ ձեռքներդ չի ընկնում:
- Կ'ընկնի... ո՛ւր պիտի փախչի: Հետեւում ենք՝

կը գտնենք անպատճառ:

— Անշուշտ, պիտի գտնէք անպատճառ:

Յետոյ էլ առանձին՝ կանչեց իր մօտ չէկիստներից՝ Մուկուչին, որ իր հայրենակիցն էր (երկուսն էլ դանձակեցի) և անձնուէր — հաւատարիմ գործակալը՝ դեռ հիւսիսային Կովկասից...

— Հը՛, չէ՛ք կարողանում՝ էդ Բագրատ Աղայեանին...

— Ճարպիկ լակոտ ա անիծածը, ընկեր Գրիչ, հետքը կորցնում ա միշտ, ամէն դիշեր տեղը փոխում: Էս չորս — հինգ օր ա՛ ես, Հայկազը, Երուանդը, Ասատուրը... համարեա դիփս էլ՝ նրա ետնուցն ենք ընկած: Կը ճանկենք... իրան շատ լաւ եմ ճանաչում:

— Մի խօքով, աշխատիր... բայց, նորի՛ց եմ հարցնում, հաստատ ես՝ միւսների հետ չի՞ անցել Պոլիս:

— Չէ, ընկեր Գրիչ, չէ՛: Հու գիտես, մինչեւ մի բան տեղո՞վը լաւ չիմանամ...

— Նո՛ւ, շատ բարի: Աշխատիր...

Ոստում էին Արգարեանի առանձնասենեակում,
Չէկայի շէնքում: Միաժամանակ ե՛լ խօսում էր Մու-
կուչի հետ ե՛լ զրազուած էր թղթերով... Կարդում,
ստորագրում, մատիտով նկատողութիւններ անում:

... Մատիտը վար դրեց մի պահ և Մուկուչին
թուաց, որ դեռ էլի պիտի խօսի նա: Մակայն մնաց
լուռ և լուռ թիւնը տեւեց երկար, — այնքան՝ որ Մու-
կուչը, — միշտ ետուն, անհամբեր երիտասարդ. —

— Կորո՞ղ եմ գնալ, ընկեր Գրիշ: Ուրիշ էլ
բան չկա՞յ հու:

— Չէ... միայն է՛ն որ... — խօսեց Արգարեանը
դանդաղօրէն, ասես վարանոտ. — հա, թէ որ կարենաս՝
իմացիր... մի օրիորդ կայ, Մայիլեան Լիզիկ... —

— Իմանում եմ, իմանում եմ, ընկեր Գրիշ,
համին Բագրատի նշանածը. էն չի՞:

Գրիշան ուղեց ասել՝ հա՛, — չասաւ սակայն...

— Էն ա, էն, — Մուկուչն ինքը պատասխանեց
նրա փոխարէն: Մերոնք սկսել են դրան էլ հետեւել...
նշանածն ա, հետը կապ կ'ունենայ, նամակից-բա-
նից...

— Տեղն իմանո՞ւմ ես:

— Ապրած տեղն էլ, ծառայութիւնն էլ, Հաւլա-
բարու մն ա ապրում: Բաղաքային ուսարժումն էլ
ոչ մէնքսոն ա բանացնում: Ի՞նչ ա, բան-ման էք լը-
սել, ընկեր Գրիշ:

— Ոչինչ... հարցնում եմ. որովհետեւ... հա,
ճիշդ է, նշանածն է: Բայց չեմ կարծում, որ խառը
լինի Բագրատի կուսակցական գործերի մէջ: Մի խեղճ
աղջիկ էր... որքան միտս է գալիս:

— Խեղճ ա, գալում ա... — միեւնոյնն ա: Հերիք
ա որ դաշնակցական շէֆի նշանածն ա: Էնպէս չի՞,
ընկեր Գրիշ:

— Այդպէս է, ի հարկէ... Բայց, թւում է, լաւ
կանես՝ ուրիշ տեղերում է՛լ չասես թէ՛ նշանածն ա:
— Բա խի՞:

— Որովհետեւ... զէ, հէնց քո աշխատանքների
համար. ա՛յն որ հետեւում էք Բագրատին, աւելի
լաւ է՝ չասես ո՛չ մի տեղ:

— Ընդհակառակը, ընկեր Գրիշ... Սո՛մա որ ա-
սում ես՝ չասեմ — ջուխտ աչքիս վրայ: Կը նշանակի
էդպէս ա հարկաւոր:

Մուկուչը զնաց, Արգարեանը մնաց մենակ՝ իր
կարինէտում: Մտազրազուած շուրջը նայեց:

Միջին մեծութեամբ, հարուստ ու նորին կահա-
ւորուած մի սենեակ էր: Շքեղ ու ճաշակով էին ա-
ռանձնապէս՝ պատերը ծածկող պատասաները, որոնց
հիմնական գոյնը բօրդօ էր, խոկ նկարները՝ յեղյեղօրէն
կապուտին տուող: Առնօրդ Բեհլիլինի մեծաղբի «Մե-
ռիկների Կղզին» կարմիր փայտի պարզ շրջանակի մէջ,
զբասեղանի դէմ-դիմացի պատին, աւելի գեղեցիկ էր
թւում Արգարեանին՝ այդ պատասանների ֆօնին վրայ:

Մեծանուն ու մեծահարուստ մի բուրժուա-փաս-
տարանի կարինէան էր եղել: Բուրժուան վաճառելի,
Արգարեանն էր եկել նստել նրա ընկուզէ ծանրանիստ
զբասեղանի քով՝ նախկին բոլոր յարմարութիւններով:

Կրասեղանից դէպի աջ՝ մի շարք սենեակներ, որ
վտարուած բուրժուայի բնակարանի ընդունարանը,
սայունը, սեղանատունը, ննջարանն էին կազմում եր-
բումն, — այժմ Չէկայի գանազան բաժանմունքներն է-
ին իրանց մէջն առել... և ամբողջ շէնքը, որ ընդար-
ձակ էր, եռյարկանի, վերից վար սեղմ վերցուել-բըռ-
նուել էր չէկայական պէտքերի ու գործառնութեանց
համար:

Միւս կողմում վարագուրուած մի դուռ կար ու

անդին՝ մի այլ սենեակ: Փոքրիկ, առանձնացած, միւս սենեակներից բոլորովին կտրուած: Բուրժուա - փաստաբանի ինչին էր ծառայել այդ մեկուսի խուցը — հետաքրքրուող չեղաւ: Արգարեանն ինքն էլ, եկած առաջին օրն իսկ բնակարանի բոլոր մասերը դիտելիս, կարեւորութիւն չէր տուել այդ սենեակին...

Բայց հիմա, երբ մտազբաղ, միայն աննպատակ նայում էր իր առանձնասենեակի պատտառներին, «Մեծերի կղզի»ին, գրասեղանի վրայի շքեղ թանաքամանին, թանգարժէք մոխրամաններին, պարֆէս - յատակին... — աչքը կանգ առաւ վարագուրուած դռան վրայ:

...«Հը՞...» — ու ելաւ, փոքրիկ սենեակը մտաւ: Ուշադիր մտիկ արեց... Լոյսը առատ էր. մի բարձրադիր պատուհան՝ դէպի բակն էր նայում: Ախորժելի, կոկիկ ու գողտրիկ թուացին՝ սենեակի եւ փոքր ծաւալը եւ առանձնութիւնն ու լուծութիւնը...

— «Յարմար է: Յարմար կը լինի»: Եւ նոյն օրը, մի քանի քիչ քիչ, սենեակը մաքրուեց: Աթոռներ բերին և մի փոքրիկ սեղան (— վաճառուած փաստաբանի նարդու սեղանը): Վրան դրին մի գրող - մեքենայ, «ուշադէր վուր»:

— Ինչներե՞ք է պէտք, ընկեր Գրիչա. — յաջորդ օրը հարցրեց Չէկայի Գաղտնի Բաժանմունքի պետը, որ ի պաշտօնէ՞ օրը տասն-քսան անդամներ Արգարեանի առանձնասենեակը կուգար - կ'երթար:

— Անհրաժեշտ է, — պատասխանեց Արգարեանը, — յատուկ մեքենագրող՝ ձեռքիս տակ... անհրաժեշտ է...

— Մի լաւ մեքենագրուէ՞ր ունեմ, — վրա բերաւ գաղտնի բաժանմունքի պետը, — հիանալի, արագաշարժ. մեր կուսակցական ընկերներից՝ Բարէնկօ Վասիլիսան: Այո՞:

— Տեսնենք... — խուսափեց Արգարեանը:

— Էլ ինչ տեսնենք: Կարգադրեցէք և վաղուանից թող գոյ՝ սկսի աշխատել ձեզ համար:

— Այդքան էլ պէտք չի շտապել: Սպասենք մի քանի օր, գուցէ մէկ ուրիշ՝ աւելի յարմար անձնաւորութիւն... —

— Ընկեր Վասիլիսան ամենից յարմարն է — եւ ձեռնհաս եւ կուսակցական... մանաւանդ որ գործ էլ չունի ներկայումս:

— Դեռ կը տեսնենք, ընկեր Խէյմից... — ասաց Արգարեանը՝ այս անգամ արդէն աւելի վճռական տոնով և խօսակցութիւնը վերջացաւ:

...Սենեակն ու գրամեքենան Գրիչան Լիզիկի համար էր յատկացրել:

Բազակայութեան տարիներ, կուլաներ, արիւնոտ պայքարի, կոտորածի, յաջողութիւնների միջից ու փառքի, հոչակի հետ միասին՝ նա բերել էր փափաք ու կարօտ — Լիզիկին գտնելու, տեսնելու: Թիֆլիզ կած առաջին օրն եւեթ, հանդիպելով Հեղուչին՝ ուղղակի կերպով տեղեկացաւ Լիզիկի մասին...

Քաղաքումն էր: Միայն այդքանն իմացաւ թէ եւ, բայց այդքանն էլ հերիք էր՝ հիւսիսային կովկասից բերուած կարօտը բորբոքելու համար: Եւ ինչ նշանակութիւն թէ ընկեր Հեղուչը արհամարհանքով արտայայտուեց:

— Չարմանում եմ, դպրոցում մենք ինչպէս էր որ ամէնքս սիրում էինք այդ աղջկան... Գոթուկ է կատարեալ: Չի հետաքրքրում ոչնչով — մեռած: Անկենդան, անօգուտ գեղեցկութիւն:

...«Իսկ ինքը (Գրիչայի մտքովն անցաւ) — կենդանի, օգտակար տղեղութիւն, ընկեր Հեղուչիկ»:

... Միրել էր Լիզիկին՝ աշակերտ ժամանակ։ Շա-
րունակել էր սիրել՝ բայակայու թեան տարիներին . ու
հիմա — պիտի տեսնէր նրան։ Յաճախ տեսնէր, Յա-
ճախ... որպէսզի նա էլ — ահա՛ — իր հոչակը, իր
մեծութիւնը տեսնէր։

Այս երկու-երեք տարուայ ընթացքում աշխար-
հը փոփոխուեց, երկիրներ հիմքից յեղաշրջուեցին...
ուստի ի՞նչ զարմանք՝ որ անհատների զգացմունքնե-
րըն էլ փոխուած լինեն։ Քաղաքաւոր հօ՛ հալածական,
վարկաբեկ — որպէս դաշնակցական, հակայեղափոխա-
կան- և վաղը, միւս օր — ս'վ գիտէ... (չէ՞ որ խնա-
յել չկայ)։

Ու երկու օր անց, փոքրիկ սենեակը կարգաւո-
րել տալուց յետոյ՝ գրաւոր հրահանգ —

«Քաղաքային վարչութեան մեքենագրուհի Մայիլ-
եան Լիզիկին՝ նոյն պաշտօնով փոխադրել Չէկա, ըն-
կեր Գրիշայի տրամադրութեան տակ»... .

— Ի՞նչ էք արել, ընկեր Գրիշա, — լուզուած ներս
ընկաւ Խէյֆիցը, գաղտնի բաժանմունքի պետը, — դուք
գիտէ՞ք թէ ս'վ է այդ Մայիլեան Լիզիկ կոչեցեալը։

Արգարեանը հասկացաւ Խէյֆիցին. բայց անփոյթ
ձեւանալով՝ պատասխանեց.

— Ես դրան ճանաչում եմ՝ մեր աշակերտ ժամա-
նակից... ի՞նչ է որ։

— Ի՞նչպէս թէ ինչ։ Յայտնի բանդիտ — դաշնակ
Աղայեանի հարսնացուն է։ Ինչպէս կարելի է այդպիսի
մէկին մտնել այստեղ... Մեր գաղտնիքները։

— Սակայն, ես ապո՞ւշ եմ, ինչ է, որ գաղտ-
նարանիս դռները լայն բաց անեմ նրա առաջին։

— Այնու ամէնայնիւ, ընկեր Գրիշա, այնու ա-
մէնայնիւ — անյարմար բան է, խի՛ստ անյարմար։

Ընկեր վասիլիսային թողած, որտեղից այդ օրիորդը
ձեր միտքն էք (բերել...) . Ի վերջոյ, ի հարկէ, ձեր
գիտնալու բանն է. ես, ի հարկէ, պատասխանատու չեմ
լինի... այնուամէնայնիւ — անյարմար է, անյարմար,
ընկեր Գրիշա։

— Ո՛չ մի անյարմարութիւն չեմ տեսնում, ըն-
կեր Խէյֆից, — պատասխանեց Գրիշան՝ խօսակցութիւն-
վէճին վերջ տալու ցանկութեամբ։ — Ասի՛՛ որ այդ աղ-
ջըկան ճանաչում եմ անձամբ. և այսպէս թէ այնպէս,
ես ինքս երաշխաւոր եմ նրա համար։ Նա՛ իմ ան-
միջական հսկողութեան տակ կը լինի։

... Յաջորդ օրն իսկ, առաւօտուանից, Լիզիկը,
նստած էր փոքրիկ սենեակում, առնդէրվուդ» ի քով
որ դուռած էր նարդու պզտիկ սեղանի վրայ։

— Ձեր սենեակը կը լինի, մենակ դուք, — ասաւ
Գրիշայի անձնական քարտուղարը, որին կանխապէս
հրահանգուած էր՝ ընդունել օրիորդին, երբ նա գայ,
Լաւ է այստեղ, ոչ ոք ձեզ չի խանգարի... հանգի՛ստ։
Իսկ իմ սենեակում՝ շարունակ ներս ու դուրս, շա-
րունակ ներս ու դուրս... և ջգայնանում եմ։ (Քար-
տուղարը ջանէլ ուսանող էր՝ միամիտ, անկրակ աչքե-
րով, որոնք հազիւ էին երեւում կապոյտ ակնոցների
տակից)։ Միայն, դուք էլ ընկեր Արգարեանի կարինէս
տով պիտի անցնէք։

... Ժամը 10-ին մօտ Արգարեանն եկաւ։ Քար-
տուղարը զեկուցեց թէ նոր մեքենագրուհին ներսու-
մըն է արդէն և սպասում է կարգադրութիւնների... .

— Բարեւ ձեզ, ընկեր Լիզիկ — խօսեց Գրիշա Ար-
գարեանը՝ փոքրիկ սենեակը մտնելով։ Բարեկամական
ամէնայն պարզութեամբ մեկնեց ձեռքը։

Լիզիկն էլ, իր ձեռքը տուած, չգիտցաւ ի՞նչ ա-

սէր: Բայց աչքերը ժպտացին զուարթ... (Այդպէս էին նրա աչքերը՝ միշտ ժպտուն ու միշտ վճիտ):

— Շատ ուրախ եմ... օրիորդ Լիզիկ, ձեզ ողջ առողջ եմ տեսնում:

Լիզիկը դարձեալ բան չասաւ:

Արգարեանը շարունակեց, երբ քարտուղարը դուրս էր գնացել արդէն.—

— Դուք, այսուհետեւ, ընկեր Լիզիկ, կարող էք վստահ լինել իմ աջակցութեան վրայ: Պատրաստ եմ՝ ամէն կերպ: Երբ կամենաք, ի՞նչ կամենաք:

— Շնորհակալ եմ...

— Դուք շատ չէք ծանրաբեռնուի աշխատանքով: Պարզն ասած, ես ինքս հրամայեցի, որ փոխադրուէք այստեղ...: աշխատանք քիչ կը լինի: Որքան յիշում եմ ամուր չէ ձեր առողջութիւնը, ուստի շատ չպիտի աշխատէք...

... Կանգ առաւ, վարանեց... «Ուրիշ էլ ի՞նչ ասեմ»...

— Առայժմ ցտեսութիւն, օրիորդ Լիզիկ:

— Ցտեսութիւն

— Ընկեր Ստեփանը՝ քարտուղարս, հիմա թողթեր կը յանձնի ձեզ, կարգադրէք... ցտեսութիւն... Եւ դուրս եկաւ: «Չգիտեմ, ո՞նց կոչեմ էս աղջկան — «ընկեր», «օրիորդ»... Թէ միայն «Լիզիկ»:

Լիզիկը նստեց իր նոր գործիքի առաջ և մի պահ յետոյ —

— Թը՛խկ թը՛խկ... Թը՛խկ թը՛խկ... տը՛կ տը՛կ... Թը՛խկ... — շարժուեցին ու զարկեցին Լիզիկի մատնե-
րը տառանիչերի տափակ գլուխներին — աննպատակ...
Թուղթ չկար մեքենայի մէջ. արտագրելիք դեռ ոչինչ
չունէր Լիզիկը. բայց մատները շարժելու պահանջ
զգաց նա — սովորութիւն էր դարձել, արդէն չորրորդ

տարին էր:

Բարակ ու երկար, մի քիչ ոսկրոտ մատներ էին... — «զաչնամուր նուազելու յարմար մատներ» — յիշեց Լիզիկը: Բագրատն էր ասել այդ խօսքը՝ սկզբ-
բում, երբ նոր-նոր սկսուել էր իրանց փոխադարձ սի-
րահարութիւնը...

... «Ախ իմ սեւ տղայ ջան: Աստուած պահի քեզ՝
ինձ համար... և ամէնքի համար»... մտածեց: Ու—

— Թը՛խկ-թը՛խկ... տը՛կ-տը՛կ-տը՛կ... — շարու-
նակում էր աննպատակ ու անկենդան աղմկել «ուն-
դէրվուդ»ը: Եւ զուգահեռ մտածում էր Լիզիկը՝ իր
սեւ տղի մասին, որ թաքնուում, իր տեղն է փոխում
ամէն օր...

Ահաւոր վտանգի մասին, որ անա հետեւում է
Բագրատին...

Իր այս նոր վիճակի մասին, որ անա նստել՝ ըս-
պասում է Արգարեան Գրիշայի թղթերին...

Այն մասին, թէ ի՞նչպէս եղաւ, ինչո՞ւ եղաւ, որ
իրան փոխադրեցին այստեղ...

... Երբ նախորդ օրը իմացաւ, թէ իրան փոխա-
դրում են Չէկա, ընկեր Արգարեանի քով, — ոչինչ չա-
սաւ: Ոչ տխրեց, ոչ ուրախացաւ: Միայն զգաց լուել-
եայն՝ այն հին երկիւղը, որ ունեցել էր առաջներում՝
Արգարեանի հանդէպ...

Այդ հին երկիւղը հիմա էլ, պարապ ունդէր-
վուղի քով, մերթ մերթ խառնուում էր մտքերին՝ սեւ
տղի մասին, ահաւոր վտանգի մասին, Արգարեան
Գրիշայի ու Չէկայի մասին...

... Գարտուղարն եկաւ, թղթերը բերաւ, յանձ-
նեց ու դնաց. և Լիզիկը սկսեց աշխատել:

Այդ օրը, պարապմունքները վերջանալուց առաջ,
Արգարեանը նորից մտաւ ներս.

— Այս փոքրիկ բանն էլ... խնդրում եմ արտա-
գրէք... հէնց հիմա, որովհետեւ հարկաւոր է:

Լիզիկը թուղթն առաւ նրա ձեռքից: Թը'խկ-
թը'խկ-թը'խկ... — և երեք բոպէի մէջ՝ գրութիւնը
պատրաստ էր արդէն:

— Ինչ արագ էք տպում... — անհրաժեշտ համա-
րեց իր զարմանքը յայտնել Գրիչան, որ սկզբից կեցել
էր «ուշագրութեան» քով, Լիզիկից ասդին: — Շնորհա-
կալութիւն: Հիմա դուք աղատ էք... ընկեր Լիզիկ:
Մեր պաշտօնական պարագլուխները սկսում են ա-
ռաւտտեան Ծ ժամին, վերջանում՝ կէսօրուայ 3 ժա-
մին: Իսկ երեկոնները — ո՛չ միշտ: Երբ հարկաւոր լի-
նէք — ձեզ կը յայտնուի: Յամէնայն դէպս ձեր հաս-
ցէն տուէք... իմ քարտուղարին:

Ու գնաց: Լիզիկը յետոյ ծածկեց «ուշագրութեան»
թիթեղեայ սենեաների փալուռն կափարիչով: Ապա շտկեց
հազուստը, գլխարկը ձեռքն առաւ... ու վարանեց՝
յիշելով, որ դուրս ելնելու համար՝ Գրիչայի առանձնա-
սենեակովը պլտի անցնէր...

V

Այնուհետեւ, Արգարեանը օրակա՛ն մի քանի ան-
գամ կուզար և — միշտ գործին վերարեբեալ —

— Ընկեր Լիզիկ, այս թուղթը շտապ է, շուտ
արէք, խնդրում եմ:

— Անհրաժեշտ է վերջացնել՝ անպատճառ մինչեւ
ժամը 12-ը: Կը հասցնէ՞ք հօ, օրիորդ Լիզիկ:

Քարտուղարին սակաւ էր ուղարկում ներս, ա-
ւելի՛ ինքն էր թղթերը բերում — տանում:

Մերթ ասում էր՝ «ընկեր Լիզիկ», մերթ՝ «օրիորդ
Լիզիկ», մերթ պարզապէս՝ «օրիորդ»... կամ — սխալ-
մամբ — պարզապէս՝ Լիզիկ:

Լիզիկի համար միեւնոյնն էր թէ ո՛նց էր իրան
կոչում. — ինպէս որ միեւնոյնն եղաւ ի վերջոյ՝ զրոյ

մեքենան քաղաքային վարչութեան մէջ բանեցնել թէ
Չէկայի դիւանատանը, փոքրիկ սենեակում: Մեքենան
մնացել էր մեքենայ, թուղթն էլ՝ թուղթ...

Եւ անտարբեր սառնութիւնն էլ՝ մնում էր նախ-
կինը: Լիզիկը, որ երբեք՝ ո՛չ սիրելի էր Գրիչային, ո՛չ
ատել, — այժմ էլ մնաց անզգայ՝ դէպի նրա յաճախա-
կի այցելութիւնները, դէպի նրա խօսքերն ու վերա-
բերմունքը, որ զուր քողարկում էին պաշտօնակա-
նութեան հանգամանքներով... Եւ դէպի նրա՝ դիր-
քը, ազդեցութիւնն ու հմայքը:

յց — ճիշտ անաջուպէս և շարունակ —
վախենում էր նրանից: Եւ ա՛հա մի օր, այդ տեւական
վախը, որ միշտ էլ, սակայն, մարմանը ծածկուած կրա-
կի պէս էր գործել Լիզիկի սրտում, — յանկարծ բռնկ-
ուեց ու այնուհետեւ սկսեց այրել ու փոթոթել Եւ
սիրտ Եւ հոգի Եւ միտք ու հանգիստ:

... Սովորական մի օր էր՝ Լիզիկի նոր պաշտօնա-
վարութեան երկրորդ շաբթուայ սկզբին: Սովորականի
պէս, Արգարեան Գրիչան փոքրիկ սենեակը մտաւ՝ ինչ
որ թղթեր ձեռքին:

— Օրիորդ Լիզիկ, խնդրում եմ արտագրել այս
... բայց կարող էք չշտապել, թո՛ղ վաղուայ համար
լինի պատրաստ:

Այդ խօսքերն անելուց յետոյ, կեցաւ մի քիչ՝
ինչ՝ որ անորոշութեան մէջ, նայեց... նայեց Լիզիկի
մերթ աչքերին, մերթ մատներին, որոնք արդէն գործի
էին անցել... — ու վերջը թէ.

— Ո՛ր չքացաւ մեր սիրելի Բագրատը... նրա-
նից լուր չունէ՞ք, Լիզիկ:

— Ոչ. — անվարան պատասխանեց սա... և Վճիտ
աչքերի մէջ, որոնք վեր նայեցին արագ, կայծեր պըս-
պըղացին:

— Հաստատ — ո՞չ :

— Ո՛չ... — և նորից շողացին կայծերը, բայց իսկոյն էլ հանգան ու աչքերը կորցրին իրանց վճիռ տեսքը, պղտորուեցին : Լուսթիւն տիրեց :

Գրիշան՝ մտքում — «Սուտ չե՞ս ստում, աղջիկ. դու երեւի թէ յաճախ ես հետը տեսնուում» :

Գանգնած էին «ուենդէրվուզ»ը պահող պզտիկ սեղանի երկու կողմերին, դէմ յանդիման : Ինչո՞ւ և ինչպէ՞ս — չիմացաւ — Լիզիկը ոտքի էր ելել՝ երկրորդ անգամ «ո՛չ» ասելու վայրկեանին ... Գրիշան բնազդօրէն առաջ թեքուեց, կարծես՝ որպէսզի աւելի լաւ մտիկ տայ աղջկայ աչքերի ներսը ... որովհետեւ չը հաւատաց նրա պատասխաններին. որովհետեւ մութ ու անզուսպ ցանկութիւն ունէր՝ իմանալու վերջապէս ա՛յն, — որ եթէ —

... «Աշխարհը փոխուեց, երկիրներ լեղաշրջուեցին հիմնիվեր»...

Եւ — «փոխուած պիտի լինեն նաեւ անհատի զգացմունքներն ու տրամադրութիւնները»... — փոխուել են արդեօք այս աղջկայ նախկին տրամադրութիւնը, համակրանքը, սէրը... հակակրանքն ու սառնութիւնը :

Ա՛յս էր ուզում իմանալ Գրիշան : Սկսած այն օրուանից, երբ Թիֆլիզ գալով՝ հարցրեց Լիզիկի մասին...

«Շա՞տ է արդեօք, դեռ շա՞տ է արդեօք սիրում Բագրատին : Եթէ տեսնուում են — կը նշանակի՝ սիրումէ : Եթէ չեն տեսնուում...»

... Ու դուրս եկաւ փոքրիկ սենեակից, առանց այլեւս ուրիշ որեւէ խօսք ասելու Լիզիկին :

Նստեց իր գրասեղանի բազկաթոռին, որ գորշագոյն նուրբ կաշիով էր պատած... ու, կարծես,

կուչ եկաւ միջին՝ գլուխն ուսերի ներսն առած, ձեռքերը կրծքին սեղմ օղակած. աչքերը՝ «Մեռելների կղզի»ին... Իսկ ուշքը, միտքը, յոյզը, զգացմունքները՝ փոքրիկ սենեակում, Լիզիկի վճիռ աչքերի շուրջը...

Մտաւ ներս — Խէյֆիցը, Գա-բապը՝ գաղտնի բաժանմունքի պետը :

— Բարեւ ձեզ, ընկեր Գրիշա :

— Բարեւ...

Խէյֆիցը ձեռքն երկնցուց անփոյթ — մտերմական շարժումով ու նստեց անմիջապէս՝ գրասեղանի միւս կողմը, Արգարեանի դիմաց : Մի ձիգ օ՛օն» արաւ շատ աշխատած-յոգնած լինելն արտայայտելու համար... ու լռեց :

Անշուշտ, բան էր ուզում ասել — և Արգարեանը զգաց, որ ասելիքը Լիզիկին էր վերաբերելու :

Խէյֆիցը չէր հաշտուել այն իրողութեան հետ, որ Լիզիկը բերուել էր Չէկա : Չկարողանալով հեռացնել նրան, սկսել էր գաղտուկ գործել նրա դէմ, աշխատելով միաժամանակ՝ կուսակցական ընկերների շրջանում վարկաբեկել Գրիշայի արած քայլը...

— Ես ուզղակի ապշած եմ ընկեր Գրիշայի այս անխոնձ վարմունքից : Օձի ձագը բերել՝ մեր ծոցն է խցկել : Անհանդուրժելի բան է, ընկերներ, ուզղակի անհանդուրժելի :

Գրիշան գիտէր Խէյֆիցի այդ ծածուկ աշխատանքի մասին : Նախ ենթադրել էր բնագոյրէն. բայց յետոյ Մուկուչը մի օր՝

— Ընկեր Գրիշ, մեր էս Խէյֆիցը շատ ա էստեղէնտեղ խօսում էր աղջկայ մասին... ու քեզ ա միշտ դիպչում :

Մի անգամ էլ քարտուղարը՝

— Չգիտեմ ինչ է պատահել, ընկեր խէյֆիցը սարսափելի լուրեր է տարածում մերմեքենագրուհու մասին։
 ... Գիտե՞ր Գրիչան, բայց ընաւ չէր անդրադառնում խէյֆիցի այդ վարմունքին։ Լուում էր, որովհետեւ — իր դիրքի ու հռչակի տեսակէտից — թույլատրելի չէր համարում՝ բացատրութեան ու վէճի բռնուելու խէյֆիցի հետ, որին և սկսել էր արդէն ոչ միայն արհամարհել, այլ նաեւ՝ վերջերս խորշում, դարշում էր նրանից... Նրա կասկածաբար լորձնոտ պառչները, շէկ խուճուճ մազերը. անհանգիստ, մանրիկ, նետի պէս ծակող խայ աչքերը. նրա անխոյժ մտերմական վերաբերմունքը, որով միշտ հասկացնել էր տալիս թէ՛ «մենք հաւասար ընկերներ ենք, ընկեր Գրիչա»... Նոյնիսկ նրա զուտ հրէական առողանութիւնը... — այս ամենից վատ էր ազդուում Արզարեանը և զըզուում։ Բայց զսպում էր իրան, հետը շիտակ յարաբերութիւն պահպանում։

Եւ հիմա, ներքուստ զզուանք զգալով և արտաքուստ զուսպ ու պաշտօնական սպասեց, թէ երբ և ինչպէ՛ս պիտի խէյֆիցն ասի իր խօսքը։

Սակայն Գաբապը այնքայն երկար՝ մերթ յօրան. ջեց, մերթ հազաց, մերթ դուռիսը աթուռի մէջքով յետ քցած՝ անտարբեր մտիկ տուաւ առաստաղին, որ Արզարեանն ինքը, այլեւս անհամբեր, լուռութիւնը խզեց —

— Ի՛նչ նորութիւններ, ընկեր խէյֆից։

— Նորութիւններ։ Կայ, այո, մի նորութիւն... թէեւ, իմ կարծիքս որ հարգնէք, նորութիւն չը պիտի համարել։

— Այսինքն — հարցրեց Արզարեանը՝ տեսնելով, որ Գաբապը կանգ առաւ —

— Այսինքն... ըրր... արդարանում է իմ եր-

կիւղը, որ ունեցել եմ հէնց առաջին բուպէից։

— Ի՛նչ երկիւղ։

— Մեր այս ժաղըմուշակի վերաբերմամբ։ (Խէյֆիցը Լիզիկին սկսել էր հեգնօրէն «մաղըմուշակի կոչել»)։ Ես ներկայումս հաստատ կարող եմ ասել, որ սա գաղտնի կապ է պահպանում իր փեսացուի հետ։ Եւ որովհետեւ առայժմ չենք կարողանում ձերբակալել բուն յանցաւորին, ապա ուրեմն...

Խէյֆիցը կանգ առաւ նորից՝ աջ ձեռքի մատները սեղանի երեսին խաղացնելով։

— Սակայն, որչափ ինձ է յայտնի — խօսեց Արզարեանը՝ գիտակցօրէն կեղծելով — Բազրատ Աղայեանը փախել է արդէն Պարսկաստան... —

— Օյ ո՛չ։ Ձեզ շատ սխալ տեղեկութիւններ են տուել, ընկեր Գրիչա։

Ու ժպտաց խէյֆիցը՝ զուսպ, նրբին հեգնութեամբ, որ մանրիկ աչքերի սուր փայլի հետ մէկտեղ՝ պարզապէս Արզարեանին էր ուղղուած։

Արզարեանը հասկացաւ. եւ շարունակեց, հակահարուածը տալու տրամադիր —

— Եթէ չի փախել, ապա ես միայն կարող եմ զարմանալ, որ ձեր գործակալները մենչեւ օրս չեն կարողացել գտնել ու բռնել... —

— Կը բռնենք, ընկեր Գրիչա, կը բռնենք։ Իսկ առայժմ, ես եկայ միայն՝ հրաւիրելու ձեր ուշադրութիւնը... (Խէյֆիցը գլխով արեց դէպի փօքրիկ սենեակի դուռը)։

— Լաւ։ Յամենայն դէպս, ես դեռ չեմ համոզուել — ան, ինչ որ դուք ասում էք։ Խնդրեմ, տուէք ինձ բացարձակ փաստեր, որպէսզի ինձ համար եւս խնդիրը պարզուի։ Սոսկ եւթադրութիւնների հիման վրայ՝ չի կարելի հօ... —

— Ինչո՞ւ էք կարծում թէ «սոսկ ենթադրու-
թիւններ», ընկեր Գրիշա: Ինչո՞ւ էք կարծում: Ես
չառ շուտով ի վիճակի կը լինեմ լիապէս պարզելու
ձեզ խնդիրը... (նրբորէն ընդգծեց «պարզել» բառը):

— Պարզէ՞ք: Քանի որ օրիորդ Լիզիկի համար
ինքս եմ երաշխաւոր եղել: Եւ այսօր էլ դեռ առիթ
չեմ տեսնում՝ յետ վեոյնելու իմ երաշխաւորութիւնը:

Սրանով էլ վերջացաւ խօսակցութիւնը: Խէյֆիցն
ելաւ գնաց՝ շուշուացնելով շինծուանտարբեր: Իսկ
Գրիշան, քարտուղարին կանչելով՝ պատուիրեց.

— Ընկեր Ստեփան, այսուհետեւ ի՞նչ որ ընկեր
Խէյֆիցը ձեզ ասելու լինի օրիորդ Լիզիկի մասին —
չտաք այլեւս ո՛չ մի նշանակութիւն...

Ասաց Արգարեանն այս խօսքերը եւ ինքն էլ
զարմացաւ ու չհասկացաւ թէ ինչի՞ համար է ասում...
խառնուել էին մտքերը. նեարդայնացած հազիւ էր
զսպում յուզմունքը, որ Խէյֆիցի ներկայութեան ար-
դիւնքն էր եւ որ, սակայն, դժուարութեամբ պահել
էր իր ներսում՝ այդ գրգռիչ ներկայութեան ընթաց-
քին...

— Եւ յետոյ... — աւելացրեց Արգարեանը —
Մուկուչին գտէք եւ ասէ՛ք թող գայ մօտս:

Քարտուղարը գնաց. եւ նորէն մնալով մենակ՝
Արգարեանը գգաց. որ իր խառն մտքերը կարգաւոր-
ուել, պարզուել էին յանկարծ... կարծես ելք էին
գտել, խաղաղունդ, — ինչպէս որ եռագող ջրի գոլոր-
չին, որ կափարիչի տակ փակուած՝ աղմկում է խառն
ու անկարգ... վերցնում է կափարիչը, գոլորչին
եղնում է դուրս եւ ջուրը շարունակում է հոսալ՝
աւելի խաղաղ... «Թող գայ Մուկուչը»: Եւ նրա
գալու մէջն էր ելքը՝ մտքերի անկարգ աղմուկի
համար...

Եկաւ Մուկուչը: Անձնուրաց ու երկրպագու՝
Գրիշայի մեծութեան ու հմայքի առաջ: Պատրաստ՝
վայրկենապէս կատարելու՝ նրա իւրաքանչիւր հրա-
մանն ու խօսքը: Ինքը՝ մարմնացած եռանդ, կտրիճ,
սիւքոտ, ողջ՝ նեարդ ու բնագդ:

— Ի՞նչ կայ, ընկեր Գրիշ:

— Դուր պինդ ծածուկիր: Էդ էլ, էն միւսն էլ:
Մուկուչը ծածկեց դռները:

Ապա, մէկէն եւ վճռակամ՝

— Ի՞նչ արիք, Բագրատի հետքը գտա՞ք:

— Էլի՛ առաջուայ արէս յետնուցն ենք ընկած,
ընկեր Գրիշ. բայց դէ, ի՞նչ ասես՝ զօչաղ տղամարդ
ա: Էն օրը Հարկազի ու Ասատուրի աչքի առաջից՝ իը-
փել, անց էր կացել Հաւարարից գէպի Սօլօլակ: Տը-
ղերքը մինչեւ որ գլխի կ'ընկնէին՝ նա թռել էր ծոփ
պէս... էս բանը քեզ եմ ասում, ընկեր Գրիշ. Խէյ-
ֆիցը, միւսները չիմանան, — մեծ ամօթ ա մեզ հա-
մար: Դօչաղ ա, զօչաղ: Հալալ ա կերած կաթը:

— Այսօրուանից՝ այլեւս հարկաւոր չի: Այլեւս մի՛
հեռեւէք դրան. և թողէ՛ք՝ որ հեռանայ քաղաքից,
կորչի՝ ուր ուզում է:

Մուկուչը զարմացաւ, րերանը բաց՝ նայեց Ար-
գարեանի երեսին... «Ո՞նց թէ, ինչո՞ւ»:

... — Հարկաւոր չի այլեւս: Դադարեցէ՛ք: Այդպէս
էլ կը հասկացնես տղերքիդ՝ Հայկազին, միւսներին:

— Նեղացել ես, ընկեր Գրիշ, որ մի՞նչի էսօր
չկարողինք թէ բռնուք...

— Ոչ, չեմ նեղացել... դուցէ և ընդհակառակը:
Ինչեւիցէ, խօսելու կարիք չկայ: Այսօրուանից —
վերջ: Եւ ի հարկէ, այնպէ՛ս՝ որ ոչ ոք գլխի չընկնի
թէ դադարեցրել էք հեռեւելը: Զեւացրէ՛ք՝ իբր հե-
տեւում էք. բայց թողէ՛ք: Թողէ՛ք — գնա, ուղի ընի:

Մուկուկը արտնջաց լուկեայն . յետոյ յապագ-յապագ
պաղ ենթարկուեց .

— Մի ժամանակ ինքդ հրամայեցիր յատուկ՝ որ
բռնենք . . . Մեր տղորանց թասիրի համար էլ լաւ կը
լինէր, որ բռնէինք . ընկեր Գրիշ . . . ամժա որ ասուժ
ես՝ հարկաւոր չի — ջուխտ աչքիս վրայ : Ինքն էլ
հէնց ուզում ա քաղաքից փախչել : Այսատում ա :

— Դէ, գնա՛ հիմա :

Մուկուկը ոտքի ելաւ ու յանկարծ մտաբերեց —

— Հա՛, ընկեր Գրիշ, մենք կ'անենք, ի հարկէ,
ինչպէս որ հրամայեցիր ինձ . ամժա էս Խէյֆիցի հետ
ո՛նց պիտի ընի բանը : Չեմ հասկանում, ինչ ա իմա-
ցել, որ մեղանից բացի՝ իրա ծածուկ ագէնտներին էլ
ա մէջ տեղ զցել, որ էդ Բագրատին բռնեն Մեզանից
աւելի խիտ՝ սա ա հետեւում էս դործին : Հը՞, ընկեր
Գրիշ . ո՛նց անենք :

Արգարեանը մտածեց : Խէյֆիցի շէկ խուճուճ
մաղերը, լորճնոտ շրթունքները, մանրիկ պսպղուն
աչքերը . . . — զգու՛սնք ու ատկութիւն զգաց Արգար-
եանը . . .

— Արժէք մի տաք, ասաց, դու քոնն արա :

— Կանեմ, կանեմ, ընկեր Գրիշ : Ամժա . . .

(Մուկուկը վարանեց) — մի խօսքով էլի՛ :

— Ինչ :

— Էդ Խէյֆիցը : Մի օր չէ, մի օր կոտուելու եմ
էդ լակոտի հետ : Ինքն իրան շատ մեծ զադ ա կար-
ծում : Սկսել ա քո մասին էլ խօսել : Ինքս հայտ ա-
կանջովս չեմ լսել — Ասատուրն էր լսել երէկ չէ՛՝ մէկ
էլ օրը : Իմ առաջ էլ թէ որ համարձակուի մի բան
ասել քու հասցէիդ, — չեմ համբերի, ընկեր Գրիշ : Իրա
լակոտ տեղովը . . .

— Նշանակութիւն մի տայ : Եւ հիմա գնա՛ :

— Ախր ո՛նց նշանակութիւն չտամ, — դէպի դու-
ռը գնայով՝ շարունակեց դժգոհել Մուկուկը . — բար-
կութիւնս ա բերում : Քեզ էլ, մեզ էլ՝ չի սիրում,
այսինքն՝ հայերին չի սիրում . . . իրա ջնուդ տեղովը :

— Դու, իրրեւ կոմունիստ, իրաւունք չունես
ասելու՝ «ջնուդ» :

— Բա նա խի՞ մեր Պաւլէի մասին մի տեղ ասել
ա՛՝ «արմեաշկա» .

— Գնա՛, գնա՛ բանիդ :

V

Հետեւեալ օրը Արգարեանը չժտաւ փոքրիկ սեն-
եակը : Չուզեց, խուսափեց : Արտագրելիք թղթերը կի-
զիկին քարտուղարի միջոցով ուղարկեց : Եւ այդպէս
եւաւ՝ էլի մէկ օր ու էլի՛ մէկ օր :

Լիզիկ, տարակուսանք, յուշեր, զգացմունք .
ամէնը մէկզի դբամ, Արգարեանը խորունկ սու զուել
էր իր զբաղմունքների մէջ :

Չէկայի դործերը, որ դանդաղ ընթացք էին առե
մի որոշ ժամանակ, — վերստին առաջ մղուեցին՝ նոր
թափով :

Դադար ու հանգիստ չունեցաւ Գրիշան՝ այդ
օրերին : Լարել էր իր եռանդն ու կամքը՝ Համաշխար-
հային Յեղափոխութեան թշնամիներին հարուածելու
համար : Հաստատ համոզմունքով ու վճռականօրէն,
անդդուելի ու անզիջող, ստորագրում էր մահուան
դատաւճիռները՝ ի գործադրութիւն :

Անվերջ ու անվերջ ձերբակալում էին մարդիկ,
դատուում Չէկայում կամ առանց դատի՝ տարւում,
գնդակահարւում .

— Չխնայել ոչ ոքի : Կոմունիզմի վերջնական

յս դժուր թիւերը արիւն ու զոհեր է պահանջում: Եւ Ձէկան — յազթական պլօյէտարիատի ամենատես աչքն է:

... Ու հրարուելի լաւայի պէս, տարածուեց երկիրն ի սփիւռ՝ ընկեր Արգարեանի անյողզող դճուկանութեան համբաւն ու սարսափը. և վառում, խանձում էր այդ սարսափ - լաւան մարդկանց հողին ու խաղաղութիւնը:

... Մահուան դատաւաճիճներին զուգընթաց՝ սէրն էր աճում Արգարեանի սրտի մէջ: Եւ ընդհակառակը, քանի սէրն էր աճում՝ այնքան աւելի բորբոքում էր այդ մարդու կրակ-ատելութիւնը՝ կոմունիզմի թշնամիների դէմ:

... Եւ այնուամէնայնիւ — այսպէս էր դատել Բազրատի մասին.

«Թո՛ղ դնայ: հեռանայ օտար երկիրներ: Թո՛ղ չընկնի մեր ձեռքը: Որովհետեւ, բոնուելուն պէս կը գնդակահարենք... ու Լիզիկն էլ կարծի, թէ դիտմամբ եմ արել, ախոյեանչոս աղաատելու նպատակով: Թո՛ղ Լիզիկն այդպիսի կարծիք չկազմի իմ մասին... և թող ուրեմն, Բազրատը իմ ձեռքը չընկնի»:

Եւ այս դատողութեան արդիւնքն էր, որ Մուկուշը պատուէր ստացաւ՝ չհետեւել, ըստ թողնել...

Արգարեանը չգիմացաւ... — փոքրիկ սենեակը մտաւ Օրերն անցնում էին այդպէս: Բայց ի վերջոյ, Լիզիկը զբաղուած էր. — Թը՛խկ-Թը՛խկ-Թը՛խկ... Թուզթ էր արտագրում:

— Բարեւ ձեզ... Լիզիկ:
— Բարեւ ձեզ... — եւ գործը դադարցրեց մի պահ. միայն՝ վեր չնայեց, այլ գլխահակ ու սպասողական՝ կեցաւ լուռ...

Եւ կատարուեց արագօրէն մի բան, որ Գրիշան

կանխապէս որոշած չէր անել եւ որը, սակայն, չկարողացաւ չանել այդ բոպէին՝ հակառակ իր դիտակցութեան ու ցանկութեան... .

— Օրիորդ Լիզիկ... — սասց՝ փոքրիկ սեղանի քով մի պահ, Լիզիկի պէս լուռ, կանգնելուց յետոյ. — դուք հանդիստ կացէք... Բազրատի մասին: Կարգադրել եմ — նրան չեն ձերբակալի: Միայն թէ, յամէնայն դէպս, զգոյշ թո՛ղ լինի... եւ աւելի լաւ է՝ հեռանայ քաղաքից: Ատէ՛ք իրան... .

Լիզիկը յուշիկ բարձրացրեց զլուխը, որի խարտեաչ մազերը սանտրուած էին մէջտեղից՝ դէպի կողքերը: «Ասեմ իրան»... — տարակուսած ուզեցին հարցնել վճիռ աչքերը, որոնց խորութեան մէջ՝ կասկածի ու հին վախի կայծերը պսպղացին նորից... . = «Բայց չէ՞ որ մենք Բազրատին չենք հանպիպում: Եւ չի գիտենք՝ որտե՛ղ է նա»:

... Ու յետոյ վերստին՝
— Թը՛խկ-Թը՛խկ-Թը՛խկ արիկ... Թը՛խկ-արիկ-արիկ-Թը՛խկ... — փութկոտ եւ ազմկոտ՝ շարժուելին ու շարժուեցին բարակ ու երկար մատները Լիզիկի... կարծես ասել ուզեցին. — «Շտապ արտագրութիւն ունենք, պարոն Արգարեան Գրիշա, վախում ենք՝ չհասցնենք»:

... — Յտեսութիւն, ընկեր Լիզիկ:
— Յտեսութիւն...

Գրիշան, դէպի դուռը շուռ գալուն պէս, գաղազեց ինքն իրա գէմ — «Ի՛նչ յիմարութիւն, թեթեւատութիւն... անվայել, անվայել»

... Տեսա՛ իր կարինետում, գրասեղանի ու փոքրիկ սենեակի դրան արանքում, աւելի դէպի դուռը, ինէյֆից՝ էր կանգնած... «Լրտեսո՞ւմ ես ինձ» — մտածեց Գրիշան և տրամադրութիւնն աւելի վատա-

ցած, անհամբոյր, համարեա կոչտ ձայնով հարցըրեց.

— Գործ ունէք ինձ հետ, ընկեր Խէյֆից:

— Այո, ընկեր Գրիշա, — անմիջապէս պատասխանեց Խէյֆիցը՝ զուարթ, խաղուն շեշտով և մի Գըրութիւն դրեց սեղանին. — Ստորագրեցէք խնդրեմ:

— Լաւ: Յետոյ եկէք-տարէք:

— Միայն ստորագրել է հարկաւոր, ընկեր Գրիշա, ինչո՞ւ էք յետաձգում ի զուր տեղը: Միայն և միայն ստորագրել: Բովանդակութիւնն արդէն լայտնի է ձեզ...

— Միեւնոյնն է, ընկեր Խէյֆից: Խնդրեմ յետոյ եկէք... կամ՝ ընկեր Ստեփանի ձեռքով կուզարկեմ ինքս:

Յաճախ, իւրաքանչիւր օրուայ ընթացքում շատ յաճախ, Խէյֆիցը նման գրութիւններ էր բերում կամ ուղարկում ներս՝ ի ստորագրութիւն. և Արգարեանը ստորագրում էր միշտ՝ առանց յետաձգելու:

Բայց այս անգամին, Խէյֆիցի ներկայութիւնից վայրկեան առաջ ազատուելու անյաղթելի ցանկութեամբ —

— Յետո՛յ, յետո՛յ, — կրկնեց նա՝ ձայնը բարձրացնելով, պարզապէս թշնամարար:

— Շատ բարի, ընկեր Գրիշա — հնազանդօրէն պատասխանեց Խէյֆիցը. բայց չհեռացաւ՝ թէպէտ և աւ հասկացաւ Արգարեանի խօսքերի իսկական իմաստը: Շատ բարի: Թող յետոյ լինի: Բայց դուք, երեւի վատ էք զգում ձեզ:

— Ընդհակառակը ինձ շատ լաւ եմ զգում:

— Ուրախալի է ի հարկէ: Բայց և այնպէս երեւի բարկացրել են ձեզ. ընկեր Գրիշա: Օրինակ... այո՛, ի հարկէ, եթէ ես էլ ձեր տեղը լինէի՝ հանգիստ մնալ չէի կարողանայ — այդ մաղձմուռազէլի պատճառով...

Արգարեանը չուց աչքերը՝ լանկարծակիի գալով Խէյֆիցի վերջին խօսքերից. բայց մինչև որ նա որեւէ բան կ'ատէր ի պատասխան, — Խէյֆիցը, ժամանակ չտալով նրան, շարունակեց.

— Որովհետեւ ասի չի կարողանում գործերը հասցնել: Որովհետեւ դեռ վարժ չի բաւականաչափ: Եւ որովհետեւ՝ գլուխը զբաղուած է կողմնակի զանազան հոգսերով... դէ ձեզ եւս յայտնի է, ընկեր Գրիշա, սիրահարուած ու նշանուած աղջիկ է, դեռատի, կրակոտ... և մնացել է անյազուրր: Ինու՞թեան օրէնքներն ազդում են — բոլորիս վրայ, բոլորիս... Ուստի, մեր կողմից մեղք է՝ դժուար արտագրութիւններով ծանրարեռնել այդ խեղճին: Եւ եթէ իմ կարծիքս հարցընէք, ապա ցանկալի է՝ օգնական տալ մաղձմուռազէլին: Ի հարկէ, եթէ սկզբից ինձ լսէիք և ընկեր Վասիլիսային բերէինք — այժմ մենք հարկ չէինք տեսնի՝ երկու մեքենագրուէի պահելու: Ընկեր Վասիլիսան ինքը մենակ կը կատարէր բոլոր աշխատանքները: Սրա արտագրածը՝ մի ժամում, ընկեր Վասիլիսան կարտագրի՝ քառորդ ժամում: Ես նրան լաւ գիտեմ: Եթէ ուրեմն դուք դեռ անյարմար էք գտնում մեր մաղձմուռազէլին հեռացնել, ապա շատ լաւ կը լինէր՝ մի ժամանակ հրաւիրէինք նաեւ ընկեր Վասիլիսային: Վասիլիսա Բարէնկօ: Պէրէկօպի կոիւնքու՞մ ընկած մեր կուսակցական ընկեր Անդրէյ Բարէնկօյի կինը... Այո, շատ լաւ, շատ յարմար կը լինի: Ընկեր Վասիլիսան, այս տեղ գալով, կարող է միաժամանակ գաղտնիքներ դուրս քաշել սրա սրտից՝ իրա նշանածի մասին, որ կարողացել է այդէն փախչել քաղաքից... այո, այո, ընկեր Գրիշա, շատ յարմար կը լինի, շատ օգտակար... այնպէս չէ՞, ընկեր Գրիշա...

Խէյֆիցն այդ ամէնն ասաց աբազ-արագ, կարճես մէկ շնչով, խօսքերը հեւիհեւ վրայ տալով, և ա-

ոանց այլեւս սպասելու, թէ ինչ կս սի Սրգարեանը. — հարցը վճռուած, կարգադրուած համարող մարդու վտան ժեստով՝ շուռ եկաւ դէպի փոքրիկ սենեակի դուռը և բարձր, բամբ ձայնով՝ հրամայարար կանչեց շէմքն ի ներս —

— Մաղըմուազէլ, կիզա... Այսանդ եկէք: Մի բոպէ: Ընկեր Գրիշան է ուզում ձեզ:

Արգարեանը յօնքերը կիսեց. զողաց նրա վերին շրթունքը՝ զայրութից, որ կուտակուեց, ուսու նրա ներսում... խոփո-խոփո՝ աչքերը սեւեռեց Սէյֆիցի կողմը: Բայց սա ճարպիկորէն խուսափեց նրան նայելուց... մինչև որ, գրեթէ անմիջապէս, շէմքին երեւաց կիզիկը՝ խաղաղ, համեստ ու կամակատար...

— Մաղըմուազէլ կիզա, բարի եղէք իսկոյն մի հըրաման տպէք ընկեր Վասիլիսա Բարէնկոյի անունով... որ նա, ընկեր Վասիլիսան՝ այսօրուանից պաշտօնի է կանչուած, որպէս մեքենադրուհի՝ ընկեր Գրիշա Արգարեանի տրամադրութեան տակ... Ձեզ հետ, ձեզ հետ միասին, մաղըմուազէլ կիզա: Վաշխատէք միասին ձեր այդ փոքրիկ սենեակում: Ընկեր Վասիլիսան հիանալի անձնաւորութիւն է, մաղըմուազէլ, և ձեզ շատ կը սիրի. յոյս ունեմ՝ դուք էլ նրան կը սիրէք... Դէհ ուրեմն զնացէք և իսկոյն գրէք հրամանը և բերէք ընկեր Գրիշան ստորագրի տնմիջապէս:

Կուռ մնաց Գրիշան: Լարել էր իր ամբողջ կամքը, որպէսզի խօսք չասի: Գիտակցում էր այդ վայրկեաններին, որ եթէ մի հատիկ բառ իսկ բաց թողնէր բերանից՝ ապա ներքը խլրտացող զայրոյթը դուրս պիտի թափուէր անարգել...

Պահեց իրան: Հպարտ ինքնատիրութիւնը հարկադրեց լսել, որովհետև պէտք չէր՝ առարկութեան ու վէճի մասեր Սէյֆիցի հետ... «Գարշելի՛ լակոս»:

... կիզիկը հեռացաւ՝ խաղաղ ու կամակատար

ինչպէս որ եկել էր: Ապա, իսկոյն, Սէյֆիցն էլ գնաց դուրս՝ գործի շտապող մարդու փութկոտ, զուարթ քայլերով:

Մենակ, Գրիշան ատամները պինդ հուպ տուեց իրար... առաւ մատիւրը, որ կեցած էր անջեւը՝ սեղանի վրայ, ու կտորեց մէջտեղից: Ձեռքն ինչ որ թուղթ ընկաւ, վերցրեց ու ճմուկեց, գցեց գէն: Յետոյ, խորը շունչ քաշելով, կարծես թօքերը բոլորովին դատարկուել էին օդից, վճակեց —

— «Այս Սէյֆից» — լակոսին հարկաւոր է ոտք առնել այստեղից»: Եւ... «վերջ պիտի տալ այս յիմարութիւններին... հանդիստ ձգել կիզիկին, թէկուզ արջամարտի: Ինչ սէր, ինչ զգացմունք... ինձ պատիւ հի բերում»:

Իր ծաւալուած հոշակին ու անուան սարսափին՝ սաղական չէին այդ բուռն, թէպէտ լուռ, սիրաբանութիւնները մի աղջկայ հետ. այդ տատանումներ, անորոշութիւնը, կամքի մեղկացումը: Ի՞քը՝ մի բանդիտ — դաշնակցականի հովանաւորի դերում՝ ոմն կիզիկի առաջ... Թեթեւամտութիւն... անվայել՝ իր նման մի պատասխանատու կոմունիստի համար... Եւ թո՛ղ այս Սէյֆից — լակոսն էլ իմանայ, որ Սէյֆիցն է, իսկ Արգարեանը — Արգարեան:

VII

Ամիսը լրացաւ, երկրորդը սկսուեց: Օրերն ընթանում էին առաջուան ձեւով: Միայն փոքրիկ սենեակում, կիզիկի «ունդէրվուդ»ի կողքին մի երկրորդ մեքենայ էր աղմկում՝ ընկեր Վասիլիսա Բարէնկոյի մատների հարուածներից —

— Թըխկ-թըխկ-թըխկ...

Գրիշան այլեւս չէր գնում կիզիկի մօտ: Ո՛չ էլ երբեք Վասիլիսային թուղթ բերեց արտագրելու:

— Ընկեր Գրիշան շատ — շատ է զբաղուած, չէ՞

ընկեր Լիզօչկա, -ասաց մի անգամ վասիլիսան՝ աչքե-
րը խորամանկօրէն ճիպի-ճիպի անելով:

(Տափակ, անհամ երեսով մի կին էր, բայց աչքե-
րը՝ աշխոյժ, հարցասէր, պրպտուն):

— Երեւի... — պատասխանեց Լիզիկն անտարբեր՝
իր երկար, բարակ մատները դիտելով:

Երկուսն էլ պարապ էին այդ միջոցին, արտազը-
րելիք բան չկար:

— Կարծում եմ — շարունակեց վասիլիսան —
ընկեր Գրիշային շուտով աւելի բարձր պաշտօն կը-
տան՝ ընկեր Լէնինն ու ընկեր Տրօցկին: Չէ՞:

— Չգիտեմ:

— Ի հարկէ կըտան: Բոյոր հակայեղափոխական
տարրերը, բանդիտները, դաշնակիները, մէնչեւիկները,
մուսաւաթիստները՝ բռնուել են սարսափով... չնոր-
հիւ ընկեր Գրիշայի: Երբեք չի ուզենայ կողմնապա-
հութիւն անել, խիստ աւաչառ է ընկեր Գրիշան...
այնպէս չէ: Չի պաշտպանի իր ամենամօտիկ անձնա-
կան ընկերով, նոյն իսկ իր հարազատ եղբորը, եթէ
նա լինի հակայեղափոխական... Չէ՞, ընկեր Լիզօչկա:

— Երեւի... Ի հարկէ...

Յետոյ ուրիշ ինչե՞ր ասեց ու խօսեց վասիլիսան
— այլեւս չլսեց Լիզիկը. որովհետեւ միտքը դուրս
եկաւ փոքրիկ սենեակի նեղ պատերից՝ որոնելու հա-
մար իր սեւ տղին, որ տասն օր է՝ հեռացել էր քաղա-
քից եւ դեռ յայտնի չէր՝ ո՛ւր է հասել նա եւ ի՛նչ է
նրա վիճակը...

— Ախ, Տէր Աստուած, դու պահես - պահպա-
նես իմ տղին: Որ չընկնի սրանց ձեռքը... Գրիշան էլ
չի խնայի: Ասել է՝ հանգիստ կացէք, օրիորդ Լիզիկ:
Բայց ինչպէս մնամ հանգիստ: Ինչո՞ւ պիտի Գրիշան
խնայի Բագրատին: Ուրիշ որի՞ն է խնայել մինչեւ.

հիմա, որ նրա՛ն խնայի»:

...Կը խնայի: Չի՞ խանջի: Այո՞... ո՞չ

Այն օրուանից, երբ Գրիշան Բագրատի մասին
ասաց՝ «Կարգադրել եմ, նրան չեն ձերբակալի» —
Լիզիկն այն օրուանից (ու՛թն օր) սկսել էր այդ հար-
ցով զրազեցնել իր միտքը շարունակ: Սկզբի պահերին
արժէք չէր տուել ասուած խօսքերին: Բայց յետոյ՝
աննշմար, ինչպէս սերմի ծլոււմը, նրա մէջ ծլեց եւ-
թաղրութիւն՝ թէ —

«Մի՛ գուցէ խկապէս Գրիշան՝ Բագրա-
տին»

Եւ ալիքների մակընթացութեան ու տեղատու-
թեան պէս, այդ եւթաղրութիւն — յոյսը, որ աճել
էր արագօրէն, — մերթ բարձրանում էր, վառոււմ,
մերթ իջնում էր, մարում: Վառուած բոպէն ելլին
Լիզիկը հրճուանքի ու երջանկութեան մէջ՝ փափաք
էր տալիս Աստծուն... Եւ օրհնում էր Գրիշային:
Այդ բոպէներին՝ աղջիկն այլեւս չէր ունենում իր հին
անհասկանալի երկիւղը, թէեւ հին օրերի պէս, շարու-
նակում էր մնալ անտարբեր, անզգայ — դէպի Գրի-
շան:

Իսկ երբ տեղատուութիւնն էր լինում, յետ գնա-
ցող, իջնող յոյսերի ու օրհնութիւնների տակից, ինչ-
պէս ծովափնեայ ժայռ տեղի տուող ջրերի միջից —
ուրեւում էր Գրիշան՝ իր դաժանութեան հոշակով: Ու
նորից կասկածն ու վախը զարթնում էին խեղճ աղջը-
կայ հոգու մէջ:

Երկիւղի եւ յուսալքումի այդ միջոցներին
էր՝ Լիզիկը սկսել էր տարակուսել... Եւ միտք էր ա-
նում, լուռ հարց էր տալիս, թէ ինչո՞ւ Արգարեանն
այլեւս փոքրիկ սենեակը չի մտնում: Ինչո՞ւ այլեւս
թղթեր չի բերում... ասում՝ «Օրիորդ Լիզիկ... ընկեր
Լիզիկ»... Չէ՞ որ նրանիցն է կախուած Բագրատի
կեանքը: Այո՞, միայն նրանից — Գրիշա Աբգարեանից:

...ինչո՞ւ ուրեմն այլեւ ներս չի գալիս: Բազ-
րառը գնացել է, լուր չկայ նրանից. ի՛նչ վիճակումն
է հիմա — յայտնի չէ: Ուրեմն Գրիշան գոնէ երե-
ւար մէկ անգամ... որպէսզի նրա վերաբերմունքից,
աչքերի արտայայտութիւնից՝ կարելի լինէր մի բան
իմանալ — Բագրատի մասին...

«Բե՛զ, քե՛զ եմ սիրում, սեւ տղա ջան, և քեզ
համար են այսքան հոգսերս: Կեանքդ հիմա Արզար-
եան Գրիշայի կամքիցն է կախուած: Ինչպէ՞ս անեմ,
տղայ ջան, որ քեզ բոլորովին ազատ թողնեն, չբռնեն
քեզ... Եթէ գիտենա՞մ ինչքան մարդ են դնդակահա-
րում սրանք — ամէն օր, ամէն օր...»

— Ինչի՞ մասին էք մտածում, ընկեր Լիզօզկա—
հարցրեց Վասիլիսան, որ ուշադիր հետեւել էր աղջկայ
լուութեան:

— Ոչինչ... այնպէս... գլուխս է ցաւում...

Լիզիկի այդ յոյսերի, մտքերի մակընթացութեան
ու տեղատուութեան օրերից մէկին՝ Բագրատն ի վեր-
ջոյ ձերբակալուեց: Նոր-Բայազէդի զաւառի մի խուլ
անկիւնում՝ ծպտեալ վիճակի մէջ, որպէս շրջիկ ման-
րավաճառ: Չերբակալուած՝ բերին Չէկայի բանտը
դրին:

Մուկուչն եկաւ իսկայն Գրիշայի մօտ: Տարակու-
սած էր, սրանեղուած՝...

— Տեսար, ընկեր Գրիշ, ես հու ասում էի՝ ՈՒՅԻ-
Ֆիցն էլ իրա կողմիցն ա հետեւում — ու կարողացաւ
բռնել տալ: Բասն ասեմ — դու աւել հասկացիր, ըն-
կեր Գրիշ. — քսան հոգի էր գցել յե սնուցը, ահագին
փող ծախսեց... Թէ որ պիտի վերջը բռնուէր, էն ա
թող մենք բռնէինք էլի, խի չթողիր:

Մուկուչի հեռանալուց յետոյ էլ Ուէյֆիցն ինքը
մտաւ ներս...

— Դուք շարունակ պնդում էիք, ընկեր Գրիշա,
թէ Բագրատ Աղայեանը փախել է Պարսկաստան, եւ
բոպա, Ամերիկա. աւելորդ էիք համարում, որ նուա-

ւենք, գտնենք: Կհամոզուէ՞ք հիմա, որ սխալուած
էք եղել:

Եւ Ուէյֆիցը, յաղթական ու զուարթ իր մտեր-
մական անփութութեամբ. ըստ սովորականի, նստեց
Արզարեանի դիմաց և մէկ շնչով՝ մի երկար, մանրա-
մասնութիւններով լեցուն պաշտօնական զնկուցում
տուեց Բագրատ Աղայեանի ձերբակալութեան պարա-
զանքի մասին... Վերջն էլ թէ.

— Դա դեռ այստեղ, քաղաքում պիտի ձերբա-
կալուէր, բայց չգիտեմ՝ ի՛նչ մի աներեւոյթ ձեռք
խանդարեց ծրագիրս: Ուժեղ ձեռք էր երեւում...
Ինչեւիցէ, բարեսիրտ մարդկանց օգնութիւնները զուր
անցան, բարեբաղդարար: Բագրատ Աղայեանն այսօր
անցան, բարեբաղդարար: Բագրատ Աղայեանն այսօր
կանգնած է յեղափոխական դատարանի առաջ և պա-
տասխան պիտի տալ իր հակայեղափոխական արտօքների
համար, որ գործել է մեր բանուորա-քիւղացիական
իշխանութեան դէմ:

Կէսօրից առաջ էր, որ Ուէյֆիցն եկաւ ու իր զե-
կուցումը տալուց յետոյ՝ ելաւ գնաց:

... Լիզիկից խնամափելու, նրան արհամարհելու,
իր դիրքն ու անունը պահելու որոշումը, որ Արզար-
եանն արել՝ անխախտ գործադրում էր մօտ տասն օր
շարունակ, — խախտուեց, քանդուեց միանգամից. և
փոխարէնը, Արզարեանի հոգու մէջ վառուեց՝ Լիզիկին
անպատճառ և անմիջապէս տեսնելու ցանկութիւն...

Ինչո՞ւ, ի՛նչ պիտի ասէր նրան, — ինքն էլ չիմա-
ցաւ սկզբում. միայն ցանկութիւնը կար՛րուոն, ան-
յաղթելի, բանական բացատրութիւններից խուսափող և
«Հարկաւոր է անպատճառ տեսնուել հետը... այսօր
եւեթ»:

Բայց փոքրիկ սենեակը մտնել չուղեց — Վասի-
լիսան այնտեղ էր (ե՛րնչ ապուշութիւն, էն լակոտի
Լիւնթովն ընկայ՝ էս մի անզգամին էլ ըբրի՛ գցեցի էս-
տեղ»):

Կէսօրին էլ տեղ պիտի գնար, և գնաց, կանխապէս պատուիրելով—

— Ընկեր Ստեփան, օրիորդին կ'առէք, որ պարագմունքները վերջանալուց յետոյ՝ ինձ թող սպասի այստեղ... արտագրելու բան պիտի բերեմ: Հիմա գնում եմ ժողովի. կը տեսի մինչեւ երեքը, երեքուկէսը... Թող յամէնայն դէպս մինչեւ չորսը սպասի ինձ:

— Կ'ասեմ, ընկեր Գրիշա... — և Ստեփանը ժեստ արաւ թէ ուզում է անմիջապէս գնալ ու ասել Լիզիկին:

— Սակայն, — աւելացրեց Գրիշան՝ վարանոտ, — այժմ դեռ պէտք չի... յետոյ: Այնպէս արէք, որպէսզի... մամ... էն միւսը, Վասիլիսան չիմանայ... հարկաւոր չի:

Քարտուղարը կատարեց պատուէրը ճշտութեամբ: Սպասեց այնքան, մինչեւ որ Վասիլիսան մի պահ դուրս եկաւ փոքրիկ սենեակից, ու ապա թէ մտաւ ներս, յայտնեց Լիզիկին Գրիշայի հրահանգը:

— Ուրեմն կը սպասէք

— Կը սպասեմ... — պատասխանեց Լիզիկը, բոլորովին անտեղեակ՝ կատարուած դժբախտութեան մասին:

Ստեփանը չյայտնեց, ի հարկէ, — խղճաց... «նշանածն է, սիրում է»:

Բայց կէսօրից յետոյ, երբ ժամը երեքն էր լրանում, պարագմունքները պաշտօնապէս դադարեցնելու ժամը, — Վասիլիսա Բարէնկօն, որ առաւօտուանից բերանը ջուր առած ի պէս, սուս էր արել և միայն աչքերը խորհրդաւոր կերպով շարունակ հեռուից ու մօտիկից ճպպացրել էր Լիզիկի ուղղութեամբ — այժմ յանկարծ թէ:

— Լսեցի՞ք ընկեր, Լիզօշկա, ընկեր Խէյֆիցին յաջողուել է ձերբակալել Գաշնակցական յայտնի շէֆերից մէկին...

Լիզիկի սիրտը կանգ առաւ վայրկենապէս: Նա զգաց ընդգործէն, թէ ո՛ւմ մասին է խօսքը...

— Աղայեան Բագրատ — շարունակեց Վասիլիսան. — վաղուց է փնտուռ էին նրան մերոնք: Բայց ինչ որ մի ուժեղ ձեռք հովանաւորում էր նրան երկար ժամանակ... մեր կուսակցական շրջաններից, անշուշտ: Այսօր լուսարացին բերել են քաղաք: Դուք, երևի, ճանաչում էք, չէ՞, Լիզօշկա, այդ Աղայեան Բագրատին:

— Այո, ճանաչում եմ — կարուկ ու կուռ շնչտով պատասխանեց Լիզիկը:

— Բայց ինչո՞ւ գունատուեցիք, հոգիս: Միթէ մի աւազակի ձերբակալութիւնը կարո՞ղ է սրել ցաւ պատճառել ձեզ:

Տանջանք ու փոթորիկ բարձրացան Լիզիկի հոգում: Վեր կենալ, ձշալ, հեկեկալ... դժուրս գնալ ուզեց: Բայց չարաւ դրանցից և ոչ մինը. այլ անսակի ձիւց ու տատապանքի գնով պահեց իրան... — չէ՞ որ Արգարեանը կարգադրել է սպասել: «Թող գայ, թո՞ղ վերջապէս... Բագրատի կեանքը նրանիցն է կախուած»:

— Շա՛տ գունատուեցիք, Լիզօշկա, ձիւց եմ ատում — կրկնեց Վասիլիսան. — միթէ դուք չէ՞ք ըզրում...

— Չգիտեմ... դուցէ... — շնչելով ասաց Լիզիկը և ապա՝ ձեռքերը քունքերին պինդ հպելով՝ կախեց դուրս և բնեց, անշարժ կեցաւ:

— «Դէ ի հարկէ» — հեզնեցին Վասիլիսայի շրթունքները: Աչքերն էլ չարախնդօրէն ձիպի-ձիպի արին դարձեալ ու դարձեալ, — մինչև որ ժամը երեքը լրանալուն պէս՝ Վասիլիսան ելաւ տեղից...

— Դէ, ժամանակն է տուն գնալու: Դուք չէ՞ք պալիս, Լիզօշկա: Գլուխնե՞րդ է ցաւում... ոչի՛նչ,

կ'անցնի: Յստուութիւն, Լիզիկա:

VIII

Վասիլիսա Բարէնիօյի գնալուց յետոյ որքան ժամանակ անցնելը չիմացաւ Լիզիկը. մնացել էր նստած ունդերվուդի ստալ, ձեռքերը քսանքերին, անշարժ... Եւ խորը, ծանր սալշութեան միջից խարխախօբէն ելնող մարդու պէս՝ սուրի ելաւ այն միջոցին միայն, երբ լսեց —

— Ներողութիւն, բնկեր Լիզիկ...

Արգարեանն էր: Վերագարձել էր ժողովից, փոքրիկ սենեակը մտել:

Լիզիկին տեսնելուն պէս՝ հասկացաւ նրա դրութիւնը:

— Ներեցէք... — կրկնեց նա — որ հարկադրել եմ ձեզ սպասել այսքան ժամանակ: Փամբ չորսից անցել է արդէն քսան րոպէ: Եւ ճշմարիտն ասած, այլևս չէի կարծում, թէ դեռ այստեղ կը լինիք... Ահա այս թուղթն է, եթէ կարելի է շատ շուտ սրտադրէք: Սակայն — մեմ... — վա՞ս էք գգում ձեզ... Եթէ իսկապէս վատ էք գգում, — ապա բնկեր վասիլիսային իմաց կը տանք՝ կը զայ կ'կարդադրի, ձեզ այլևս անհանգիստ չեմ անի:

Սպասեց, որ Լիզիկը բան ստի. բայց պատասխան չտաւանալով, նորէն ինքը —

— Ի՞նչ է պատահել ձեզ... Լիզիկ:

Արգարեանը պզտիկ սեղանի հակառակ կողմին էր կանգնել. այժմ յուշիկ՝ փոքրիկ պտույտ տուկց, եկաւ աղջկայ ստալ ե կեցաւ, երկու քայլ առջին: Ձեռքերը գոզացին՝ անբացատրելի մի անհամբերութիւնից, որ տիրեց նրան յանկարծ ու յախուսն:

Լիզիկն էլ, այլևս անբնդունակ՝ իրան զսպելու, մէկէն փոզուկ արձակեց... և գլուխը աւելի հակելով՝

թաշկինակը պինդ սզմեց աչքերին:

Ստուեր անցաւ Գրիշայի լայն ու ողորկ ձախատով: Մտքերը, իրարից պոկուած, սեղանան եղած, սկսեցին երերալ ու տարուբերուել՝ գժկամութեան ու խանդի, կարեկցութեան ու զայրոյթի, թշնամութեան ու սիրոյ հակընթաց կոհակների մէջ, որոնք բոլորը միասին ու միաժամանակ եռացին հոգու մէջ:

— Ներեցէք, օրիորդ Լիզիկ... չը գիտէի, թէ վատ էք գգում ձեզ. այլապէս՝ չէի սպասեցնի, ի հարկէ... կարող էք այժմ գնալ... ազատ էք:

Սաանց այլևս սպասելու, որ Արգարեանը կրկնի իր վերջին խօսքը, — արազ սուրի ելաւ Լիզիկը՝ արտասուքը աչքերից կտրելու ջանքերով և վերցրեց վերարկուն՝ որ հազնի, դուրս փախչի անմիջապէս: Բայց արտասուքը չէր կարում և վերարկուն էլ չէր հարում Լիզիկի ուղած արագութեամբ:

Իսկ այդ ընթացքում, Արգարեանն ասաց այն, որի համար և անհրաժեշտ էր համարել — սկզբում անպիտակցօրէն, բնագոյային մղումով — տեսնուել Լիզիկի հետ...

— Հանգիստ եղէք, օրիորդ... Բազրատին վրտանդ չի սպասնայ: Ես եմ այստեղ և... ինչեւիցէ, Լիզիկ, հանգիստ կացէք...

Լսեց թէ շրտեց աղջիկը. այդ խօսքերին նշանակութիւն տուեց թէ չը տուեց... — միայն թէ, հազիւ վերարկուն հալած, արցունքը զսպելու մասին այլևս չմտածելով՝ նա շտապեց դուռն ի դուրս — փախստականի երկիւղով բռնուած լինէր, ասես:

Արգարեանը մնաց փոքրիկ սենեակում — գարնուած, գաղազուն, մտայլ —

...«Իր ծառայուած հոշակի համար՝ սագակա՞ն է միթէ, ներելի՞ է միթէ այս թուլութիւնը, որ ո՛չ մի

արդարացում չունի»...

Շտկուեց, ճակատը պարզեց վեր՝ ողջ լայնութեամբ և իր կամքը հաւաքեց, որ նրանով ճնշի ու ճզմի, ցրիւ տայ ամէն տարակուսանք ու թուլութիւն, կարեկցութիւն... — «Թո՛ղ Բագրասն էլ գընդակահարուի... Թո՛ղ ինչ ուզե՛նայ՝ կարծի Լիզիկն իր մասին: Թո՛ղ մէկ անգամ ընդմիշտ՝ վերջ, վե՛րջ առնեն այս անպատուարեր ձգձգումները»...

Բայց կամքը եկաւ ու յետ գնաց, որովհետեւ անգոր կզաւ ոչնչացնելու Լիզիկի վճիռ աչքերը, որ պինդ տեղաորուել էին Արդարեանի սրտի մէջ՝ տարիներկից ի վեր:

...Դուքս եկաւ փոքրիկ սենեակից ու գնաց իր բնակարանը՝ իր անձնական օթօմօքելով, որ միշտ պատրաստ՝ սպասում էր նրան Չէկայի դռան առաջ:

Քաղաքի գլխաւոր պողոտայից աջ՝ ծոռուղ մի նեղ փողոցումն էր գտնուում տունը, որ մի գեղեցիկ վիլլայի էր նման՝ ծառերի ու խաղաղութեան մէջ կորած:

Մի քաղաքացած միլիցիօնէր վեր ու վար քայլում էր՝ շինութեան առաջքը եղերոյ ասֆալթէ մայթի երկարութեամբ, և երբ օթօմօքիւն եկաւ, մուտքի մօտ կանգնեց, — միլիցիօնէրն էլ շտկուելով՝ պատուի կեցաւ ու մնաց այդպէս կանգնած՝ մինչև որ Արդարեանը մտաւ ներս:

Մէկ ժամից յետոյ, նորէն ժողովի պիտի գնար: Սակայն —

«Ընկեր Սահակեան, — երկտող գրեց ժողովի նախագահին — այս երեկոյ չեմ կարողանայ գալ որովհետեւ գլուխս ցաւում է սարսափելի կերպով: Ընդհանրապէս էլ՝ լաւ չեմ գգում ինձ: Հիմա ասպիւրին կ'ընդունեմ, որ քրտնեմ... և մինչև վաղն առաւօտ

կ'անցնի տկարութիւնս, ի հարկէ: Մտել եմ, երևի»:

Յաջորդ առաւօտ Գրիչան քաւական ուշ գնաց Չէկա:

Դեռ իւր սենեակը չմտած, Խէյֆիցն ելաւ գիմացը: —

— Բարեւ, ընկեր Գրիչա... — և հետք միասին կաբինէտը մտնելով՝ սկսեց:

— Այսօր ձեր մաղրմուռազէլը չի եկել գործի: Եւ եթէ իմ կարծիքս հարցնէք, լաւ ասիթ է՝ նրան տրձակուած համարելու:

— Ինչո՞ւ:
— Ինչո՞ւ: Որովհետեւ: Որովհետեւ գազանի նամակագրութիւն է ունեցել իրա նշանածի հետ:

— Որտեղից գիտէք... — հարցրեց Արդարեանը, բայց ինքն էլ զգաց անմիջապէս, որ անտեղի, ծիծաղելի հարց էր (Չէկայի գաղտնի բաժանմունքի պէճախն էր հարց էր (Չէկայի գաղտնի բաժանմունքի պէճախն էր հարցնել թէ՛ «որտեղից...»): Եւ բնական էր, որ Խէյֆիցը պիտի նեղնէր ու հեղնեց, ի հարկէ, լիովին օգտուելով ասիթից:

— Որտեղից գիտե՞մ... հա՛հա՛հա: Ինչացո՞ւ են հապա իմ գազանի գործակալները: Ինչացո՞ւ է հապա իմ սուր հոտատութիւնը: Չէ՞ որ, ընկեր Գրիչա, ես աւելի եմ կասկածոտ՝ մարդկանց վերաբերմամբ, քան թէ դուք: Աւելի զգուշամիտ... Յամէնայն դէպս, այս անգամ արդէն ես ի վիճակի եմ փաստեր գնել ձեր առաջ: Յիշո՞ւմ էք, անցեալ անգամ դուք չհաւատացիք իմ «Ենթադրութիւններին» և պահանջեցիք՝ փաստե՛ր, փաստե՛ր...

— Շատ բարի, տուէք ձեր ունեցած փաստերը:

— Ընկեր Սվիրովի մօտն են գտնուում մաղրմուռազէլ Լիզայի կամ, ինչպէս դուք էք յաճախ կո-

չում, «ընկեր Լիզիկի» երկու նամակները: Մինչև այժմ դուք ամէնեւին չէիք հաւատում ինձ: Հիմա՛ էլ, սեանում եմ, գիտարանում էք հաւատար: Սակայն յոյս ունիմ, որ պիտի՛, յամէնայն դէպք, հաւատաք ընկեր Սվիրովին, որին ե, ձեր իսկ հաւանութեամբ, յանձրնում է Բազրաս Սպալիանի գործի քննութիւնը: Կր հաւատա՛ք, ընկեր Գրիշա, որովհետեւ...

Արգարեանը, որ վճակ էր՝ արձամարձանքի բարձրութիւնից ու համբերութեամբ մինչև վերջ ունկրնգրել Խէյֆիցին, — պաշտօնը յանկարճ՝ ընդհատելով նրա խօսքը —

— Կը հաւատամ թէ ոչ — դա արդէն ի՛մ դիտարկն է, ընկեր Խէյֆից: Ձեր հրահանգների պէտքը չունիմ բնաւ...

— Բայց ինչո՞ւ էք յուզում, ընկեր Գրիշա — փարձեց Խէյֆիցը՝ մեզմ ճաշեով ու ժպտով առաջն ստնել զայրոյթի, որ սկսել էր թափուել Արգարեանի աչքերից: Սակայն անհնար էր այլեւ...

— Վե՛րջ տուէք ձեր կեղտոտ ակնարկներին — շարունակեց Արգարեանը՝ աղաւ ընթացք տալով իր գլուանքի ու պճոճութեան զգացմունքներին, որ միշտ գտնել, պահել էր իր ներսում... — ճանաչէ՛ք ձեր տեղն ու չափը: Ի՛նչ չէ, որ պիտի կուտակեցա՛կա՞ն զատարակութիւն տաք Գրիշա Արգարեանին: Այո, ես — ե՛ս եմ. իսկ դուք՝ մի մեծամիտ, յանգուցն յակոտ...

— Ընկեր Գրիշա, ընկեր Գրիշա... — լեզուն փոքն ընկած՝ կակազում էր Խէյֆիցը:

— Լազո՞ւ! — որոտաց Արգարեանը՝ իր գայրոյթի սանձը լսլորովին բաց թողնելով — զրուեց կը ջարդեմ, ուղեղը հրի կը տամ, որպէսզի իմանաս թէ ո՛վ է Արգարեան Գրիշան...

Խէյֆիցը, դանաւ ու սարսփանաք, դուրս փախաւ:

...Յաջորդ օրնեկի՛մ, Գործկոմը հրահանգեց Խէյֆիցին. — անյապաղ ճանապարհուել Բաթում՝ Չէկաջի գործերին վերաբերեալ զարմնի յանձնարարութեամբ, առանձն օր ժամանակով: Եւ նշանակուած օրը, իրիկուայ ժամը 10-ի գնացքով՝ ճանապարհուեց:

— Առաջմ աչքբանով բուսականացիր, մինչև որ լսլորովին կը հեռացնենք դրան՝ որեւէ ցուսի տակ, — ասաց Գործկոմի նախագահը Գրիշային, որ պահանջ էր դրել՝ Խէյֆիցին անյապաղ փոխադրել ուրիշ տեղ:

Խէյֆիցի ու Արգարեանի միջև տեղի ունեցած սուր խօսակցութիւնը՝ յայտնի էր զարձել կուտակեցական վեկայանք բնիկներին. և այդ անակարճ միջադէպը ծածկելու համար էր, որ Գործկոմի նախագահը՝ Բաթում մտրց ուղարկելու անհրաժեշտութիւնն առաջ ընրաւ: Ընկեր Գրիշայի զիրքն էր այդպէս թևաղբում:

...Խէյֆիցը դնաց: Եւ նայն այն պահերին, երբ նա մեկնում էր կաշարանից, Արգարեանը, իր բնակարանում, խօսքի էր նստել ընկեր Սվիրովի հետ — Բազրասի գործի քննիչը:

Ճարտկան օրերին՝ զիմնադրալի մտարտական գտարանից՝ մի բնրատու թեան պատճառով վստաւում և այնտեղեան՝ կրթական ճակից խազա զուրս հանուած մի երկրաստարց էր Սվիրովը: Տիպիք սուտական չէնք թթով, կապապուն աչքերով, յօնքերը՝ գրեթէ սպիտակ, հոգիւ տնսանելի: Բարբի ու գիւրարեկ, թէի լաւ կուտակցական համբաւի տէր: Արգարեանին յարգում էր անկեղծօրէն, խանարուած էր նրա կամքի ու հոանդի առաջ...

Սոսակցութիւնը տեւեց չորս կէս ժամ. և երբ վերջացաւ —

— Շատ բարի, ընկեր Արգարեան, — ասաց Սփիրօզը՝ ոտքի ելնելով. — ևս բոլորը հասկացայ և կ'անեմ, ինչ հարկաւոր է: Յետեւութիւն, սիրելի ընկեր:

— Յետեւութիւն, ընկեր Սփիրօզ:

Եւ ընկեր քննիչը գնաց, Բագրատ Աղայեանի գործի միջից հանեց Լիզիկի գրած երկու նամակները, որ ձեռք էին բերուել Խէյֆիցի գործակալների ջանքերով. և առանձին ծրարելուց յետոյ՝ ուղարկեց Արգարեանին, Մուկուչի ձեռքով:

IX

Չէկայի բանար բերող կալանաւորները սովորաբար երկար էին պահուում, կամ բաց էին թողնուում շուտով (թիւրիմացութեամբ բռնուածները) կամ տարուում, գնդակահարուում էին:

Բայց անցաւ տասն օր — և Բագրատը դեռ մնում էր բանտում: Նրա հետ միաժամանակ, երկու-երեք օր յետոյ էլ բերուածներից վեց հոգի, կարծօրէն դատուելուց վերջ, գնդակահարուեցին՝ յեղափոխական հոգձեպ տէմպով: Բայց նրա վերաբերմամբ՝ Չէկան, կարծես, չէր շտապում: Դատը ուշանում էր:

— Ընկեր Գրիշ... — քաջուելով, անվստահ հարցրեց վերջապէս մի օր Մուկուչը. — ո՞նց ա բա՛ էս Բագրատ Աղայեանի բանը մնում ա...

— Իեռ քննութիւնը չի աւարտուել:

— Էլ ի՞նչ քննութիւն, ընկեր Գրիշ, դէ էն ա ամենքիս էլ յայտնի ա՛ ով ա, ինչեր ա արել մերօնց գէմ: Ինքն էլ հու ազամարդի պէս կանգնած՝ ասում ա թէ արել եմ:

— Այո... բայց և այնպէս մեր քննութիւնն ևս անհրաժեշտ է... թէկուզ ձեռական տեսակետից:

— Դէ որ ասում ես, ընկեր Գրիշ, ի հարկէ... էդպէս ա ուրիմն հարկաւոր: Ամմա՛ գրտում աւել — պակաս ինօք ու զրից ա լինում ակր:

— Ո՞վ, ի՞նչ...

— Էն շահորդի Խէյֆիցի բաներն են էլի: Հըմի էլ, — ինքն էստեղ չի, բայց մատը միջումն ա, — տարածել ա՛ միթամ Բագրատի գործը դու զիտմար ես քաջքնել տալիս... զիմիշ չես անում... միթամ՝ էն աղջկայ խաթրու:

Գրիշան հեղնեց... և ինքն էլ զգաց՝ որ շինծու, անգոր, ասպարդիւն հեղնանք էր: Ու զգուած իրանից՝ ուզեց վեր կենալ նստած տեղից, քայլել, մեռակ մնալ...

Բուռն ինքնակշտամբանքով՝ ատամները ամուր սղմեց վարի շրթունքին... Անկամ, թուլամ' թմ մի արարած, որ — լսելեայն ձեռակերպեց Արգարեանը — որ «կուսակցական սկզբունքները գո՛հ է բերում սիրային անմիա զգայմունքներին»:

Ուստի — «վերջ պիտի ալ այս կոմեդիային... վերջ... վազն ևեթ՝ պաշտօնից հեռացնել աղջկան, իսկ այն տղան էլ... — այո՛, թող գնդակահարուի: Բաւակա՛ն է վերջապէս: Իրաւունք ունեն խօսք ու զրոյց անողները: Իրաւունք ունի Խէյֆիցը... և՛ ս եմ մեղաւորը»:

Այդպէս տրամադրուած, վճիռներն արած-վերջացրած, Արգարեանը դուրս եկաւ իր բնակարանից (առաւօտուայ ժամը 9-ը չկար դեռ) և Մուկուչին էլ իր օթօմօրին առնելով՝ գնաց Չէկա:

...Բայց վճիռները քանդուեցին հէնց որ, իր ասանձնատենեակը մտած, Արգարեանը լսեց —

— Թը՛ լսկ - թը՛ լսկ - թը՛ լսկ... թը՛ լսկ - թը՛ լսկ:

Լիզիկն էր՝ փոքրիկ սենեակում: Չորս-հինգ օր բացակայելուց յետոյ (հիւանդ էր եղել), նա վերստին

իր գործն էր կատարում ասաջուայ սկս գլխանակ, հնազանդ ու կամակատար: Երա վերադադրից ի վեր — մօա մէկ շարձի — Արգարեանը միայն մէկ անգամ էր տեսնուել հետք, այն էլ շառ թուռցիկ կերպով, իր խիստ պազուած պահան:

Վասիլյան Բաղճնիօն այլևս չկար: Եւջիֆիցի գրնարայ երևք օր յետոյ նրան էլ փոխադրեցին Չեկայի անտեսական բաժանմանը:

Եւջիֆիցին էլ չէր վերադառնալու իր սրահնօնին: Բաթումում իսկ նա նրաման ասաւ. — Անօթիջաղէս ճանապարհուել Բագու և սասանձնել այնտեղի Չեկայի զազանի բաժանմանը սեանի պաշտօնը: Հրամայար՝ Մոսկուայի Կովկասեան լիազօրն էր:

...Քրիսկ-թրիսկ-թրիսկ... — և Արգարեանի վրձիաները, կամքը, ինքնակշտածքանքը, մաքերը խառնուեցին իրար: Գլուխը ծանրացաւ...

...Ու խորհեց. «Ես խօսք եմ տուել Լիզիկին՝ Բաղբառի մասին. ուրեմն պարտաւոր եմ պահել խօսքըս: Ես զինուորական եմ — չեմ կարող գրճեք»:

...«Թո՛ղ ով ինչ ուզում է ասի: Բարձր եւջիֆիցիների հէրն անիծած: Կոմունիստը չի՞ կարող սիրել Լիզիկի նման մի աղջկայ, որ կոմունիստ չի... Ի՞նչ արած թէ նա դաշնակ լիզերի նշանածն է, սիրում է նրան»...

...Ու միևնույնով ասում մեծայիւր երկիմալ թրդթեր՝ խնամքով իրար դաբաւած, գրուել էին դրասեզանի վրայ՝ այնպէս, որ Արգարեանը նկատի իսկուցն: Լիզիկին էր բերել, զրել, ասաջին մատը՝ այն բնդարձակ զեկուցումի, որ արտագրում էր նախորդ օրուանից:

...Վերցրեց, թերթեց, նայեց... սխալներ գրատաւ. և վարանքի մէջն բնկնելով՝ բողջներ շարունակ

չէր կարողանում վճռել՝ արդեօք մանե՛լ օրիորդի մօա թէ ոչ...
«Ունդէրվուդ»ն աղմկում էր այնտեղ անդադար և կանչում:

Վերջը, զանգանարեց Արգարեանը և Լիզիկին ինքր դուրս եկաւ փոքրիկ սենեակից:

— Բարե ձեզ, օրիորդ:

— Բարե ձեզ...
Գունաս էր: Աչքերը գեանին: «Ես էլ, կարծես դունաս պիտի լինեմ» — անցաւ Գրիշայի մտքով.

«դեռ սխալ էր» — հարցնել ուզեց նա. բայց փոխարեւր, իրեն իսկ անսպասելի, ասաց Լիզիկին՝ նկատագրեթեան չեշտով, գրեթէ խիստ.

— Նայեցէք, օրիորդ, լաւ չէք արտայրել: Արլախներ կան: Ահա... փոխանակ «16»-ի՝ տղի էր «161» և ստացուել է «161-ին յունուարի», փոխանակ «քանդիտութեան համար» — «կանդիլոտի համար». տղի էր՝ «պատմի քաղցրադոյն չափը», մինչդեռ պիտի լինի՝ «պատմի բարձրադոյն չափը»: Մենք չունենք՝ «քաղցրադոյն», այլ միայն «բարձրադոյն»... այսինքն՝ գնդակահարութիւն: Եւ այն աչալէս — սխալներ, սխալներ: Ես խնդրում եմ լինե՞ք ունելի ուշադիր: Յեռ վերցրեք և ուղղեք սխալները...
Լիզիկը ձեռքը մեկնեց — աչքերը շարունակ գեանին — և թղթերը վերցնելով՝ ուղեց շրջուել, որ գնայ...

— Գեռ սպասեք... օրիորդ Լիզիկ... մի բողջ: Չեզ հեռ խօսելիք ունիմ... Լիզիկ — խօսեց Գրիշան՝ վճռական ձայնով...

Սակայն, այդ վճռական յայտարարութեանը յաջորդեց մի բառի խն, որ երկար տեւեց բառական... և նրբաբար, Գրիշան բերանը բացաւ վերտալին, ձայնը

նրբաբար, Գրիշան բերանը բացաւ վերտալին, ձայնը

դողում էր արդէն...

— Լիզիկ, — ասաց նա՝ աղջկայ երեսին շտակ նա-
յելու ինքնահարկադրանքով, — ես սիրում եմ ձեզ...
վազուց...

Այդքանը միայն: Աւելին ասելու, կարծես, ան-
կարող, նա գլուխը մի կողմ դարձնելով՝ լռեց բոլո-
րովին:

Լիզիկը գուրս գնաց:

Դժուարը՝ առաջին խօսքը բերանից հանելն էր:
Այնուհետև Գրիշայի համար մի ուղիղ ու հանդարտ
ճանապարհ բացուեց՝ նորից ու նորից յայտնելու Լի-
զիկին իր զգացմունքները:

Շարունակ առիթներ էր գտնում, որ կամ ինքը
փոքրիկ սենեակը մտնի կամ Լիզիկին կանչի իր մօտ:
Այլևս չուսեցաւ ոչ մի տարակուսանք ու ինքնաղքո-
գոնութիւն: Չէր էլ հետաքրքրում, թէ ի՞նչ կ'ասեն
իր ընկերներն ու պաշտօնակիցները, որոնք արդէն
ափաշկարա տեսնում էին Արգարեանի բարեկամու-
թիւնը՝ գէպի մեքենագրուհին:

Այդպէս՝ 5-6 օր, մէկ շաբաթ: Եւ ապա՝ Ար-
գարեանի շունչը, կարծես, հասնել սկսեց: Որովհե-
տև Լիզիկը շատ սուկաւ, անհրաժեշտ բողբոջներին մի-
այն, աչքերը կը բարձրացնէր գետնից վեր, խօսելիս՝
չէր նայի Արգարեանի երեսին, այլ միայն սրպէս
ստորադրեալ, հնազանդ ու լուս, գլուխը վար թե-
քած, նրա կարգադրութիւններն էր լսում ու կատա-
րում: Եւ նրա այս վերաբերմունքն էր՝ այս վիրա-
ւորական անորոշութիւնը, որ ծանրացնում էր օրը:

Արգարեանը սկսեց հետզհետէ նեարդայնանալ:
Յօնքերն իրար էին գալիս...

Եւ անա — վերջապէ՛ս — մի օր Լիզիկը, ա-
ռաւօտը ծառայութեան գալով, իր սենեակը մտնե-

լու համար՝ կարինէտի միջով անցնելիս (Գրիշան
արդէն եկել՝ զբաղուած էր գրասեղանի քով) —

— Բարև ձեզ — ասաց:

Եւ Գրիշային թուաց, որ փոխուած է Լիզիկի
աչքերի արտայայտութիւնը: Չայնն էլ ուրիշ կերպ
հնչեց: Քայլուածքը՝ աւելի աշխոյժ... Թուաց այդպէս:

— Բարև, բարև... բարի լոյս ձեզ, օրիորդ Լի-
զիկ — կարմրելով ու փութկոտ պատասխանեց Գրի-
շան և իսկոյն ոտքի կանգնեց, առաջացաւ՝ ձեռքը
մեկնեց աղջկան:

Աղջիկը սղմեց ձեռքը, և Գրիշան զգաց ջերմու-
թիւն, ինչ որ շնորհակալական թէ երախտագիտական
ջերմութիւն, որ Լիզիկի թաթիկից անցաւ ու տա-
րածուեց նրա մարմնովը մէկ:

Այդ օրը՝ մինչև պարսպմունքների պաշտօնական
գազարը, և յաջորդ օրն էլ՝ Լիզիկին աւելի ու աւելի յա-
ճախ էր բարձրացնում իր աչքերը՝ գէպի Արգարեանը:
Ասես, չէր խուսափում այլևս...

Ի՞նչ էր պատահել Լիզիկին — հանելուկը պար-
զել չկարողացաւ: Չուզեց էլ առանձնապէս, որ ան-
պատճառ պարզուի, հասկացուի... Հերի՛ք էր իրա
համար՝ որ չկար առաջուայ հնազանդ, կամակատար
ոութիւնը, որ վրդովում էր ամէն համբերանք ու
խաղաղութիւն:

Անսպասելիօրէն երևան եկած փոփոխութիւնը
շարունակուեց երկու օր: Լիզիկի աչքերը, աւելի ու
աւելի պարզուելով, իրենց նախկին վճիռ կերպա-
բանքն առան: Եւ երկրորդ օրը կատարուեց աւելի
անսպասելին:

Գրիշան փոքրիկ սենեակն էր մտել՝ այն ընդար-
ձակ զեկուցումի մասին, որի արտադրութիւնը գեթ
չէր վերջացել: Գործին վերաբեւեալ խօսքն ասել —

արծնելուց յետոյ, նա աւելցրեց —

— Ես չառ ուրախ եմ, Լիզիկ, որ վերջապէս ցրուած են ձեր աչքերից տխրութեան գորշ ամպերը...

Եւ այդ էլ աւելով՝ յուշիկ ու խաղաղ, ինքն էլ չիմացաւ ինչպէս, մտակցաւ թեւր ձգեց Լիզիկի ուսով, նրա գլուխը քաշեց, իր կրծքին սղմեց: Լիզիկն անշարժ կեցաւ ու անձայն: Պատակ չրթուցնելով՝ Գրբիչան համբուրել սկսեց նրա աչքերը, բերանը, ձաւկաւրը...

Համբոյրները կէտակաթուկ արձաղանգում էին փոքրիկ սենեակի սեղմ պատերում: «Ունդէրվուզը», աղմուկը կարած, կեցել էր պղտիկ սեղանին: Միջօրեայ արեւի մի շեղ ճառագայթ, պատուհանից ներս թափանցած, խաղում էր մեքենայի սեւաներկ փայտուն կափարիչի հետ: Ետում էր արիւնն ու անձամբերութիւնը Գրբիչայի մէջ...

Իսկ աղջիկը, անշարժ ու անձայն, ատում էր հեքով, ինքն իրեն համար, ատում էր անսահման սիրով:—

«Քե՛ղ համար, իմ սև աղայ, քե՛ղ փրկելու համար: Քե՛ղ համար... ամէ՛ն ինչ: Մտածել եմ, աղայ ջան, շատ եմ մտածել, գիշերները չեմ քնել... և անթող համբուրի ինձ — քե՛ղ, քե՛ղ համար: Միայն թէ փրկուես դու: Քո կեանքը, ի՛մ կեանքը — որա ձեռքին է»...

— Ինչո՞ւ ես լռել, լաւ աղջիկ... մտածում ես, հա՞: Շատ մի մտածի: Աշխարհն է ամբողջ յեղաշրջուել նիմնիվեր: Ի՛նչ զարմանք, որ փոխուում են մարդկային զգացմունքները: Յաւիտենական — չկայ ոչինչ:

...«Քեղ համար, իմ սև աղայ ջան»: Արգարեանը —

— Կը դա՞ս ինձ մօտ, հա՞: Իմ բնակարանը: Կը դա՞ս: Այս իրիկուն: Անուշ աղջիկ, լաւ աղջիկ: Ես սարսափեցի եմ ուրիշների համար: Իսկ դու՝ ամէնե՛րն չվախենաս ինձանից: Ուրեմն կը դա՞ս երեկոյեան:

— Կը դամ... — պատասխանեց Լիզիկը: Եւ նրա միտքը շարունակում էր խօսել սև աղի հետ —
...«Միայն քեզ համար... Բազրա՛ս»...

X

Գրանից յետոյ անցան օրեր: Լիզիկը դարձեալ մի անդամ եղաւ Արգարեանի մօտ:

Այդ անդամին Գրբիչան թէ —

— Այսուհետև, Լիզիկ, կարիք չկայ որ ամէն օր դաք աշխատանքի: Զեկուցումն արտադրեցիք, այժմ հանգստացէք մի քիչ: Կարեւոր գործեր երբ լինեն, կը յայտնեմ: Բայց, ի հարկէ, յբիւ ու կանոնաւորապէս կը ստանաք ձեր սոճիկը... Նոյն իսկ կարելի է այսօր պիտի մի բան անել... (մի վայրկեան կանոց առաւ Գրբիչան ու հարցադրեց ձեր մօտիկ սուեց աղջկան) — ձեր «ունդէրվուզը» փոխադրել տայինք բնակարանս... և կարծում եմ յարմար կը լինի, այնպէս չէ:

Լիզիկը պատասխան չունեցաւ:

— Կարծում եմ որ յարմար կը լինի — շարունակեց Գրբիչան. — բայց՝ սպասենք մի քանի օր... կը կարգադրեմ: Կարգադրե՛մ:

Լիզիկը դարձեալ լուռ մնաց: Եւ միայն այդ հարցի հանդէպ չէր, որ մնում էր անխօս:

Ելլը նա, ժամը 10-ից անց, հեռացաւ, Գրբիչան նոր միան զգաց ու տեսաւ, որ Լիզիկը շատ քիչ խօսեց՝ իր այցի շուրջ երկու ժամուայ ընթացքում: Եւ ընդհանրապէս՝ հնազանդ էր սոսկ, կամակատար...

Վերջիջելով այդ այցի մանրամասնութիւնները, որոնք մնացել էին անսկաւ Լիզիկի ներկա-

յութեան ժամանակ, — Գրիչան պրպտեց հնազանդութեան, անտարբերութեան պատճառը և գտաւ հնչուութեամբ —

Բագրատը:

...«Այո՛, դեռ սիրում է նրան»:

...Սակայն՝ սրտնեղութեան ու խանդի համար դեռ ևս չկար նրա հոգու մէջ տեղ և տրամադրութիւն: Որովհետեւ շատ էր ուժեղ Գրիչայի սեփական սէրը, և դեռ շատ էին թարմ Լիզիկի երկու այցելութիւնների ազդած թափն ու հմայքը:

...Եւ Բագրատը դեռ ևս մտում էր Չէկայի բանտում:

— Քննութիւնը դեռ հաշտ չի՞ վերջանում, բնկեր Գրիչ, — հարցրեց Մուկուչը կրկին:

Գրիչան կատկածոտ նայեց նրա աչքերին և հասկացաւ, որ նա նպատակով է այդ հարցը տալիս:

— Դեռ ոչ... չի վերջացել Բագրատ Աղայեանի գործի քննութիւնը — դանդաղորէն, անփոյթ ձևով ասաց, աչքերը հեռացնելով իր հոտաւարիմ գործակալի երեսից:

— Հասկանալի աս... — փութկոտ, ասեւ ակամայ, վրայ բերաւ Մուկուչը և կարմրեց:

— Ի՞նչն է «հասկանալի»: Հը՛, Մուկուչ: Ինչի՞ մասին է խօսքդ, — անփոփոխ՝ նո՛յն անփութութեամբ հարցրեց Գրիչան:

Մուկուչը յայտնելով ասաց. — Էդ էլի... այսինքրն՝ որ գործն էդպէս երկարում աս... կը նշանակի՞ էդպէս ա հարկաւոր, հասկանալի աս...

...«Այո՛, ի՛ հարկէ» — մաքով արձագանդեց Գրիչան անձնուէր չէկիտի արած այդ եզրակացութեան, որ ճիշդ էր...

Երկուսն իրար լու հասկացան: Գրիչան վաղուց էր

հասկացել Մուկուչի մտայնութիւնը. ուստի և նրանից ծածկելու այլևս ոչինչ չուէր:

Այո, ինքն էր Բագրատի գործը ձգձգոր: Ինքն էր տէրն ու տիրականը Չէկայում: Ինքն էր պատասխանատու... — ու չէր վախենում ոչինչից: Արգարեան Գրիչան է՞ ինքը՛... Միայն Լիզիկիցն էր քաշում: «Չկարծի թէ...»

Եւ մնաց ու մնաց Բագրատը Չէկայի բանտում՝ սպասումի և անորոշութեան մէջ, — սակայն հանդիստ, անխռով, սրովհետեւ չէր սարսափում մահից:

Սպասում էր նաև նրա Բալիկը, — նոյնպէս հանդիստ ու անխռով, սրովհետեւ ապահով էր. — Գրբէշա Արգարեանն ինքը խոտաւայել էր, որ Բագրատի կեանքին վտանգ չի սպառնայ:

Այդ խոտումը սրբազործեց Լիզիկը՝ իր մեծ գոհողութեամբ և նրա ամուր հիմքի վրայ կանգնեցրեց մի ամբակուտ հաւատք:

Թող ուշ լինի, ոչինչ: Միայն թէ փրկուի սեւ աղան... և կը փրկուի, ի հարկէ — արուած գոհողութեան գնով, Գրիչայի պաշտպանութեան հնորհիւ:

Եւ այդպէս՝ սպասում էին — սեւ աղան՝ բանտում, անուշ Բալիկը՝ իր յոյսերի ու սիրոյ յորձանքներով սղոցուն: Սպասում էին՝ ատանց խմնալու, թէ իւրաքանչիւրը ինչի՞ն է սպասում, ինչն է սպասում:

Երբեք չի կարողացան տեսնուել իրար հետ: Լիզիկը շատ էր աշխատում, որ թոյլ տան իրան՝ Բագրատին բանտում այցելելու: Բայց իրաւունք չէին տալիս:

Արգարեանին դիմել այդ մասին — չուգեց: Իսկ Արգարեանն էլ ինքը՛ խուսափում էր հարցից...
...Բանտի պատերով իրարից անջատուած, զրկուած, Բագրատը չիմացաւ իր Բալիկի մեծ գոհողութեան մասին: Ժամանակն էլ, անչեղ ու հանդարտ, անցնում էր գնում:

Բագրատի բանտարկութեան երկրորդ ամսուայ կիսին, Մուկուչայից, Համառուտական Չէկայի կողմից

մի արտակարգ լիազոր եկաւ՝ կօնարօլ անելու համար տեղական գործերը :

Լիազօրը, զարական զօրքի նախկին ենթասպայ, գահնիկ ու յոխորտող, եկամտակամ, գործերի հետ ծանօթացած չծանօթացած, գտաւ՝ սրտեղական Չէկան —

— Երես է տուել բանուորաւորի զայնիական իշխանութեան թշնամիներին :

Եւ հրամայեց՝ զիչերն եւեթ գնդակահարել տասներկու հողի, որոնք բանտումն էին՝ որպէս «հակա յեղափոխական» շներ :

Նոյն զիչերն էլ (սակայն այդ տասներկուսից ջուկ տեղում եւ ստանձին ժամին) — գնդակահարուեց Բաղրատ Աղաջեանը՝ ստանց հարցաքննութեան :

Լիազօրի հետ միասին, նրա անձնական քարտուղարի եւ խորհրդատուի հանգամանքով Բաղրատի եկել էր նաև Խէյֆիցը :

— Սրա անունը վաղուց պիտի ելքի զիրքը գրցած լինէիք, — հրամայարար նկատուեց նախկին ենթասպայի Բաղրատի գործի հետ իբր ծանօթանալուց յետոյ՝ նրա գնդակահարութեան օրվերը ստորագրելով։ — այսպիսի անփութութիւն անհանդուրժելի է՝ մեր կուսակցական գիտելիքներ տեսակէտից :

Բաղրատի գնդակահարութիւնը տեղի ունեցաւ Գրիչայի համար միանգամայն անսպասելի արագութեամբ, յանկարծական մրրիկի պէս, որ պայթում ու զարկում է անակնկալ կերպով։ Ընկեր լիազօրը նոյն իսկ աւելորդ էր համարել նախապէս հարցնել նրա կարծիքը...

— Ի՞նչ հարկաւոր է, — խորհուրդ էր տուել Խէյֆիցը. և նա էլ համամտած —

— Ի՛ հարկէ, ասել էր, մենք աւելի արդարապատ ենք :

XI

Գնդակահարութեան լուրը վաղ ատուօտուանից տարածուեց քաղաքում, թէև արար կատարուել էր զապանի, ուչ զիչերով, քաղաքից դուրս, չորս վերտու հետու :

Լիզիկն էլ իմացաւ :

Այդ օրը, երբեկոյցեան, նա պիտի գնար Գրիչայի մօտ : Նախորդ օրն էր խոտոտուել գնալ : Արգարեանը, նրան երեք օր հանդիպած, կարօտել էր սաստիկ և մի երկտող էր ուղարկել (Մուկուչի միջոցով) —

— «Կր սպասեմ վազն իրիկուն : Ե՛կ, անպատճառ : Կը դա՛ս» :

Բերանաղի էլ հրահանգել էր Մուկուչին —

— Կ՛ասես, որ Մուկուչից յատուկ լիազօր է եկել : Որ յոյս կայ... և այն էլի : Ինքնոց ես իմանում թէ՛ մ՛նց կ՛ասես : Էզուց իրիկուն, ժամը էսպէս ութին, ինքզ աւտօբիլը կը վերցնես՝ կերթաս Լիզիկի յեանուց :

Ու հիմա, գեո կէսօր չեղած, Մուկուչը թէ՛

— է՛լ աւելորդ ա, բնկեր Գրիչ... այսինքն՝ աւտօբիլը : Երէկ որ ասիր թէ՛ կը վերցնես, կ՛երթաս... հիմա է՛լ աւելորդ ա : Գնալս զուր կ՛ըլի, — աղջիկը դժուար թէ՛ գայ :

Արգարեանը չպատասխանեց. բայց Մուկուչը հասկացաւ, որ նա համաձայն է իր ասածին...

— Գէ ի հարկէ, հասկանալի ա — շարունակեց Մուկուչը և ապա մէկէն սկսեց հայնոյցել Խէյֆիցին :

Ամբողջ օրը Գրիչան լուս մնաց՝ պրիթէ բոլորովին : Ոչ Մուկուչի հետ, որ շարունակ չուրջն էր պըտոյտ գալիս ու չէր հեռանում մօտից, ո՛չ քարտուղարի հետ, որ մի քանի անգամ դիմել էր գործերին վերաբերելու, ո՛չ էլ ուրիշ շատերի հետ՝ նա չուղեց խօսել աւելի, քան անհրաժեշտ էր :

Փակուել էր ինքն իրեն մէջ : Լայն ձակատից չըքացել՝ փայլն ու ողորկութիւնը : Յօնքերը իրար եկած, չըպուկեցին այլևս : Աչքերի մէջ — ստանութիւն, սրից, կարծես, գալտուկ սարսափ էր փչում :

Եւ ծխում էր շարունակ : Սովորաբար չծխող, նա այժմ սպառում էր զլլանիկ զլանիկ յետեւից, զըրիթէ անընդհատ :

...Մինչև որ ժամանակը հասած համարեց տուն

գնալու :

Այս անգամ ոտքով գնաց , աղաա թողնելով իր չօթերին : Այ էլ ուզեց , որ Մուկուչը կամ իր զոյգ թիկնապահները , որոնք սովորաբար միշտ պիտի քայլէին յետեից , — գային այս անգամ :

Լիազօրին չտեսաւ այդ օրը . չուզեց հանդիպել — չգնաց նրա մօտ , ինչպէս արել էր նախօրը երկու օրերին :

— Ի՞նչ է պատահել քեզ , այ մարդ , դունաա ես սարսափելի , — ասաց ընկեր Սահակեանը , որ իր օթօմօթիլից նկատելով նրան փողոցի վերին մասում կանգնեց ու իմաւ ցած :

— Աչինչ չկայ... գլուխս է մի քիչ :

— Հապա ինչու ոտքով :

— Գլխիս ցաւն անցնի սրպէսդի :

— Գէ ցտեսութիւն :

— Յտեսութիւն :

— Իսկ այսօրուայ ճիտաին կարո՞ղ կը լինես գալ — յիշեցրեց ընկեր Սահակեանը՝ օթօմօթիլն ելնելով : — Կը դամ... ի հարկէ :

Հասաւ իր բնակարանը : Բոլորովին ուշադրութիւն չդարձնելով հերթապահ միլիցիաների չիակուելուն ու փութկոտ սղջոյնին , մտաւ ներս՝ ուղղակի իր ննջարանը և — ասանց հանուելու — պատկեց մահճակալին :

— Աւ՛ու — մանչաց խուլ , զգալով վէրքը՝ որ հասցրել էին իրա ինքնասիրութեան :

Միտել էր արդէն , երբ վեր կացաւ՝ ատանձնասենեակն անցաւ , որ կից էր ննջարանին : Երկարական լայսը գտնելով , նստեց գրասեղանի առաջ և աննպատակ աչք սծեց վրայի իրերին : Ըստ սովորութեան՝ ամէնն իր տեղում , կարգին — կանոնաւոր — թանաքամանը , ծծիկը , մատիաները , թղթերը , բոաուենինգ ստորձանակը , որ միշտ լիքը , պատրաստ՝ գըրուած պիտի լինէր մէկդի , — աջ կողմից , — իր երկու լուսանկարները (մէկը՝ Ներսիսեան դպրոցի աշակերտ

եղած ժամանակից , միւսը՝ Հիւսիսային կովկասի առղմական օրերից) : Գրքերը եւայլն :

Շուտով ձանձրացաւ , ապա ծարաւ զգաց և — փոխանակ զանդահարելու , որ ծառան գայ , — ինքը ելաւ՝ սեղանատունը գնաց , որ ատանձնասենեակից բաժանուած էր մի փոքրիկ սրահով : Սրահիցն էլ ուղիղ՝ դուռն էր գէպի փողոց :

Ջուր ուզեց խմել . բայց յետոյ բիւֆէից մի շիշ սպիտակ գինի վերցնելով . լցրեց գաւաթը , խմեց , նորի՛ց լցրեց... («այս մէկն էլ խմեմ ու գնամ ժողովի») :

Գրոցից զանդահարեցին այդ միջոցին :

Լիզիկն էր . գլխին թեթև շալ քցած , մազերը՝ անկարգ գրութեան մէջ... — Գո՛ւր , Լիզիկ... — ապեց Գրիշան , թէև

ծառան , որ գնացել էր դուռը բանալու , նախապէս տեղեկացրեց թէ ո՞վ է կեղոը :

Աւելին չկարողանալով ասել , փութկոտ շարժումներով ու քայլերով՝ իր ատանձնասենեակն առաջնորդեց Լիզիկին...

— Բայց հաւատացէք , Լիզիկ , իմ կամքից անկախ է կատարուել այդ դժբախտութիւնը : Ես խօսք էի տուել ձեզ , այո՛ . բայց իմ ցանկութիւնը , իմ ծըրազիրը քանդեցին... Հանգստացէք , Լիզիկ... հանգրստացէք , ինչդուրս եմ :

Սակայն , Լիզիկի համար ի՛նչ հանգստութիւն : Սրտի բոլոր ամբարդակները փուլ եկած՝ արիւնն ու արցունքը , վէրքերն ու տանապանքը հեղեղ՛ պէս թափուած էին դուրս : Եւ Գրիշայի բոլոր խօսքերն ու ջանքերը անցնում էին ապարդիւն՝ հեղեղը կանգնեցնել չէր լինում :

Հարեաւոր որ հազարաւոր մարդկանց կեանքերը թեթևօրէն ձգնած և գեռ պատրաստ՝ էլի ուրիշ հարիւրների ու հազարների կեանքերը փշրելու , — Գրիշա Սրբարեանը , անգոր ու ձեռնթափ , նայում էր այդ արցունքի ու տանջանքի հեղեղին և միայն —

— Հանգստացէք , Լիզիկ — կրկնում էր շարու-

նակ.— Խնդրում եմ, հանդատացէք

...Քիչ անց փողոցում լաւեց ատրճանակի պայթիւն՝ Գրիշա Արզարեանի բնակարանից:

Հերթապահ միլիցիօնէրը գէպի դուռը փութեց ու սկսեց զարկել զանոց հեիճն: Չարկեց երկար ժամանակ: Գլխաւոր փողոցից ուրիշ քաղաքապահներ ևս եկան՝ ձայնը լսած լինելով...

Դուռը բացին վերջապէս: Շէմքին ինքը Արզարեանը երեաց:

— Աչինջ չկայ — ասաւ Տրիթապահին՝ իշխանաւորի հանդարտ, հրամայական շնչով.— ձեռքիս ատրճանակը պայթեց, անզգուշութիւնից... Գնա՛ բանիդ: Սմէնքն էլ ցրուեն թող:

Չայնը հանդիսաւ, — դէմքն էր խիստ գունատ. բայց ոչ ոք չնկատեց, սրովճեռե մուտք էր բոլորովին: Դուռը բանալուց ասա՛լ Գրիշան հանզցրել էր լոյսը, որ սրանի մէջ փառուելով՝ սովորաբար լուսաւորում էր նաև դրան ատաջքը, փողոցի կողմից:

Հերթապահ միլիցիօնէրը հեռացաւ յարգանքով, ձեռքը բռնեցին, և ապա շարունակեց քայլել մայթնի վեր ու վար:

Եւ բնառ նշանակութիւն չի տուեց, երբ մի տասնամանուհինգ ընդէ յետոյ, մի օթօմօրիկ հապճեպ թափով ներս սլացաւ գլխաւոր պողոտայի կողմից և աղմուկով կանգնեց դռան մօտ:

Եկողը Մուկուչն էր: Շտապ իջաւ օթօմօրիկից. բայց նախ քան ինքը զանդահարելը, — դուռը բաց արին և նա մտաւ ներս:

— Ի՞նչ ա պատահել, բնկեր Գրիշ:

— Աչինջ... ներս գնանք — ասաց Գրիշան և սրանից գէպի սեղանատունը քայլեց, Մուկուչն էլ յետեից, կրկնելով —

— Ախր ի՞նչ ա ըլիլ... տէլէֆօնով էնպէս փող կանչեցիք: Բան չի՞ պատահել հու:

Սեղանատունը մութն էր: Գրիշան վառեց լոյսը՝ ելեկտրականի կոճակը զանդազութեամբ դարձնելով

պատին:

Մուկուչը վախեցաւ՝ երբ ձրագի լուսով տեսաւ նրա գէմըր—սփրթնած, անկենդան, —ու բացականչեց. — Հիւանդացն է՛ք, բնկեր Գրիշ: Գնամ, բժիշկ բերեմ իսկոյն:

— Պէտք չի: Հիւանդ չեմ... — ու սեղանի առաջ նստելով՝ Գրիշան չփեց ձակատը, աջ ձեռքի ափով, աջնքան պինդ, որ թուայ՝ սկոտը ջարդել էր ուղում:

Մուկուչը անհանդիսա՛ւ՝ ոտքերի տեղն էր փոխում շարունակ, այլևս չհամարձակուելով հարցնել իր սիրած ամբողջ, թէ ի՞նչ է նրան պատահել:

Ձեռքը ձակատին, Գրիշան մտաց այդ դուրթեան մէջ. և սենեակում տիրած լուսթիւնը այնքան եղաւ խաղաղ ու զգոյշ, որ փողոցից լսուեց մայթին բայց ոչ միլիցիօնէրի զանդաղ քայլերի թխկոցը:

Երկար տեսեց այդ լուսթիւնը:

Ի վերջոյ Գրիշան ձեռքն իջեցրեց ձակատից, նայեց շուրջը, կարծես նոր էր զարթնում, և ասաց Մուկուչին, առանց նրա կողմը նայելու... — Կարինէսս մտիք ու... տես...

Մուկուչը շտապեց ասանձնատենեակը, որի դուռը սեղանատան մուտքի ուղիղ դիմացն էր, սրանից անդին: Այնտեղ էլ մութն էր. բայց սենեակի դասաւորութեանը լաւ ծանօթ՝ Մուկուչն իսկոյն գտաւ դարձրեց ելեքտրական կոճակը... և տեսաւ...

Գիտնին, գրասեղանի առաջ, բնկած էր Լիզիկը Մէջքի վրայ, ձեռքերը կրծքին անշարժ:

Մօտեցաւ... աղջկայ մազերը, պարանոցը, այտը, սերանը՝ արիւնոտ և արիւնը դուրս էր եկել աջ քունքից: Կոացաւ, շոշափեց ու գտաւ վէրքի տեղը...

(Նոտուներնդի գնդակ ա) — հասկացաւ Մուկուչը՝ իորձ աչքով վէրքը զիտելով:

...Վերադարձաւ սեղանատուն:

Գրիշան դեռ նստած էր իր տեղում և այժմ ձրւում էր և միաժամանակ, ազատ ձեռքով, խառնում նստնշտորում էր իր մազերը:

Չարմանքից զարկուած, Մուկուչը կանգնեց գոան
մօտ, մէջքը պատին, և այլևս չէր վստահանում հար-
ցեր ապլ:

Ու վերստին, շարունակուող զգայուն լուսնեան
մէջ, գրտից՝ միլիցիօնէրի ոտնածայնն էր հնչում:

«Սեղանատուներ եկայ, որ ջուր բերեմ: Վախեցայ
թէ ուշագնաց կը լինի, չէ՛ր կարուում լացր... Չուրբ
խմէր, սիրտը հանդարտուէր գուցէ... եկայ, որ բե-
րեմ: Ու մինչև որ ես կը գոյի, ջուրը կը լեցնէի...»

— Իսկ բառունիդ սեղանից վերցրել, խփել է իրան:
Չայնը չէնց որ լուռեց, վազեցի յետ՝ գէպի կարինէտը:
Բայց խփոյն էր մահացեր»: Այսպէս պատմեց Գրիշան
Մուկուչին:

Կանգ առաւ, ծիւց հարկից — միևնոյն տեղում
նստած, մազերը շարունակ խառնըշտօրելով: Մուկու-
չը, գրտից յետոյ, սիրտ առաւ՝ հարցրեց.

— Հիմա ո՞նց անենք, ընկեր Գրիշ, գիտե՞իր...
հասեղ, քու տանը... ո՞նց անենք:


— Չգիտեմ... դեռ չգիտեմ, Մուկուչ: Առայժմ
գնա, սրտեղից որ լինի ծաղիկներ բեր, վրան փոս-
լու համար: Իսկ նախ քան այդ, մտի՛ր՝ մարմինը զի՛ր
խանին... Չեռքերը ես եմ խաղալ կրճախ. այդպէս
թող կենան: Գնա՛, ծաղիկները... ճարիր:

— Կը ճարեմ, ընկեր Գրիշ, կը ճարեմ: Ամէնը
նեմ, ինչ որ առում ես: Ամմա... էս խեղճի մօրը,
բերին՝ իմաց չանենք:

— Չգիտեմ... չգիտեմ, Մուկուչ: Դեռ թող լու-
ռայ: Մուկն է հիմա: Գլուխս էլ՝ խաւարի մէջ...
ա՛:

Մուկուչը կարինէնտն անցաւ: Լիզիկի անշունչ
արմինը պառկեցրեց գիւանին...

...Փա՛կ՝ աչքերը, սրտնք վճիտ էին երբեմն: Անսպառ
ու թարմ ժպտը, որ միշտ հոսել էր նրանց գուարթի
խորքերից, — այլևս չկար: Միայն՝ ապեղնատուն սև
չնքերն էին մնացել ճակատի անկյուններն, զեղնութեան
ֆօնի վրայ աւելի՛ սևացած, աւելի՛՛ գեղեցկացած:



ՀՀ Ազգային գրադարան



NL0368761

56.957